Azg
armenian daily
24 ՅՈՒՆԻՍ 2000 ՇԱԲԱԹ 117 (2085)

Ալբերտ Գորի դեմ մեղադրանքներ են առաջ քաշվում

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 23 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ԱՄՆ արդարադատության նախարարության ներկայացուցիչները գլխավոր դատախազ Ջանեթ Ռինոյին կոչ են արել հետաքննություն սկսել՝ պարզելու համար, թե խախտել է արդյոք փոխնախագահ եւ ժողովրդավարական կուսակցությունից նախագահի պաշտոնի թեկնածու Ալբերտ Գորը ընտրական օրենքները անցած նախընտրական արշավի ժամանակ: Ինչպես նշում է BBC-ն, նկատի է առնվում Գորի այցը բուդդայական տաճար, որտեղ կատարվել են նրա ընտրարշավի համար միջոցների անլեգալ հանգանակություններ: Գորը ժխտում է, որ ինքն իմացել է այդ մասին: Սակայն արդարադատության նախարարության հատուկ բաժնի ներկայացուցիչները նախնական փաստաթղթում գլխավոր դատախազին հանձնարարել են սկսել այդ գործի հետաքննությունը: Ինչպես նշում է BBC-ն, նման մի հետաքննություն հիմա, նախագահական ընտրություններից հինգ ամիս առաջ, Ալբերտ Գորի համար հղի է լուրջ քաղաքական հետեւանքներով:

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Քոչարյանի Վաշինգտոն եւ Փարիզ մեկնելուց առաջ Ալիեւը կոշտացնում է դիրքորոշումը

ԲԱԿՈՒ, 23 ՅՈՒՆԻՍԻ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Չնայած Ադրբեջանի եւ Ռուսաստանի նախագահները բանակցել էին կովկասյան երկրների ղեկավարների հանդիպման ժամանակ, նրանք հանդիպեցին նաեւ ավելի ուշ՝ Ղարաբաղյան հարցը քննարկելու նպատակով», հաղորդում է Ադրբեջանական ANS գործակալությունը՝ անդրադառնալով հայ-ադրբեջանական երկխոսության ակտիվացման խնդրին: Ըստ գործակալության, Ալիեւը հավաստիացրել է Պուտինին, թե Բաքուն չի պատրաստվում վերանայել իր դիրքորոշումը եւ կընդունի միայն «ադրբեջանական տարածքների վերջնական եւ առանց նախապայմանների ազատման» տարբերակը: Ալիեւը նաեւ ակնարկել է, թե Ռուսաստանը աջակցում է հայկական կողմին: Միաժամանակ, ըստ գործակալության տեղեկատվության, Ալիեւն առաջարկել է նոր ոլորտում սկսել Ադրբեջանի եւ Ռուսաստանի համագործակցությունը: Թեեւ մանրամասները չեն ճշտվում, սակայն դիվանագիտական աղբյուրների տվյալներով, խոսքը հատուկ ծառայությունների մակարդակով գործակցություն ծավալելու մասին է: Երկկողմ հանդիպումը տեւել է ընդամենը 40 րոպե:

Մինչդեռ, գործակալությունը ոչինչ չի հաղորդում այն մասին, թե ինչ պատասխան է տվել Պուտինն Ալիեւին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Եկեղեցի-պետություն հարաբերությունները թեւակոխել են նոր փուլ

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը երեկ հանդիպում է ունեցել Գերագույն հոգեւոր խորհրդի ընդլայնված նիստին մասնակցելու նպատակով Հայաստանում գտնվող հայ առաքելական եկեղեցու արտերկրի եւ հայաստանյան թեմական առաջնորդների հետ:

Ողջունելով նրանց, Ռոբերտ Քոչարյանը նշել է, որ եկեղեցին պետության հիմնական նեցուկն է, ազգային այն կառույցը, որը միավորում է համայն հայությանը Հայաստանում եւ սփյուռքում: Նա կարեւոր է համարել Գերագույն հոգեւոր խորհրդի նիստի գումարումը Հայաստանում հրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի նախաշեմին: Նրա խոսքերով, 1700-ամյակը կարեւորագույն իրադարձություն է, եւ պետությունն ու եկեղեցին կենտրոնացնում են իրենց ջանքերը հավուր պատշաճի այն նշելու:

Ամենայն հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդը համառոտակի ներկայացրել է նիստի աշխատանքների ընթացքը եւ հրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարությունների հետ կապված ծրագրերը: Բարձրաստիճան հոգեւորականների խնդրանքով նախագահը պարզաբանումներ է տվել նաեւ երկրի ներքաղաքական, սոցիալ-տնտեսական կացության եւ զարաբաղյան խնդրի կարգավորման գործընթացի վերաբերյալ: Նա շեշտել է, որ ներքաղաքական իրավիճակը կայուն է եւ լիովին վերահսկելի: Դժվարությունները հաղթահարված են, եւ այսօր իշխանությունների առաջնային խնդիրն է առավել ակտիվ զբաղվել տնտեսական հարցերով:

Զրուցակիցներն անդրադարձել են նաեւ եկեղեցի-պետություն փոխհարաբերություններին: Նրանք գոհունակությամբ արձանագրել են, որ դրանք թեւակոխել են որակական նոր փուլ:

Վերափոխ հայրապետը հավաստիացրել է, որ եկեղեցին շարունակելու է իր բոլոր կարողություններով զորավիգ լինել հայրենի պետականության ամրապնդմանը:

ԳԵՐՄԱՆԻԱ

Հանովերում անձրեւ են գուշակել. Նոյյան տապանի փորձված ծածկը քանի՞սը կնախընտրեն

«Էքսպո-2000» ցուցահանդեսում Հայաստանի օրն է

ԼՈՒՍԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Հունիսի 23-ին Հանովերի օդանավակայանում վայրէջք կատարեց Հայաստանից ժամանած չարտերային ինքնաթիռը՝ պատշգամբներ հանելով ռազմական ուղեւորակազմով: ՀՀ 35 հոգանոց պատվիրակությունը ՀՀ առեւտրի եւ արդյունաբերության նախարար Կարեն Եսմարհյանի գլխավորությամբ մասնակցելու է «Էքսպո-2000» ցուցահանդեսում հունիսի 24-ին նախատեսված Հայաստանի ազգային օրվա միջոցառումներին: Պատվիրակության կազմում ընդգրկված են նախարարներ Լեւոն Բարխուդարյանը, Ռոլանդ Շառոյանը, Զավեն Գեւորգյանը, Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանը, Աժ պատգամավորներ Հերմինե Նաղդալյանը, Հրանտ Խաչատրյանը, Ռոբերտ Ամիրխանյանը, Հենրիկ Իգիթյանը, տեղեկատվության եւ գրահրատարակչության պետ Էդվարդ Միլիտոնյանը, դեսպաններ Սուրեն Սահակյանը, Վիգեն Չիթեչյանը, Աշոտ Ոսկանյանը, գերմանահայոց թեմի առաջնորդ Գարեգին Բեկչյանը, տաղավարի տնօրեն Կարեն Աղամյանը եւ այլք: Պատվիրակության կազմում լրագրողներ են ընդգրկված: Հունիսի 24-ին ՀՀ-ն ներկայանալու է նաեւ իր 50 ճանաչված արտիստներով:

Տես էջ 3



Հայաստանում 200 մլն դոլար «աշխատող» չկա՞

ԵՐԵՎԱՆ, 23 ՅՈՒՆԻՍ, ՍՆԱՐՔ: Հայաստանի ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Լեւոն Բարխուդարյանը չի հավատում մամուլում հայտնված այն տեղեկությանը, որ հայերին պատկանող 150-200 մլն դոլար «լվացվել» է Bank of New York-ում: Բարխուդարյանը գտնում է, որ Հայաստանում հնարավոր չէ աշխատել այդքան շատ գումար: «Դա անհնար է, մենք այնքան հարուստ չենք, որ 200 մլն դոլար «լվանանք» արտասահմանյան բանկերում», ասել է նախարարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

Ադամանդագործությունը Հայաստանում ծաղկող հատուկենտ ոլորտներից մեկն է

Այս ոլորտի խոշոր գործարար Գագիկ Աբրահամյանը պարգեւատրվեց լավագույն բիզնեսմենի դիպլոմով ու ոսկե մեդալով

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐՈՅԱՆ

Մոտ երկու տարի առաջ հիմնված, միջազգային չափանիշներով կառուցված բրիտանական DCA ադամանդի գործարանը այսօր դարձել է ամենախոշոր հարկատուներից մեկը Հայաստանում, եւ որի արտադրանքը 100 տոկոսով արտահանվում է: Այդ կարգի ձեռնարկության հիմնադրումը նախաձեռնելու ու հաջող կառավարման համար DCA տնօրենների խորհրդի նախագահ Գագիկ Աբրահամյանը երեկ ստացավ ՀՀ արդյունաբերողների ու գործարարների միության սահմանած լավագույն գործարարի դիպլոմն ու ոսկե մեդալը, միության նախագահ Արամ Վարդանյանի ձեռքով: Պրն Աբրահամյանը այդ առիթով հրավիրված հյուրերին, որոնց թվում էր ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի դեսպան Թիմոթի Զոնսը՝ տիկնոջ հետ, գործարարներ, լրագրողներ, ուղեկցեց DCA-ի ամբողջ տարածքով, մեկ առ մեկ ցույց տվեց արտադրամասերը, նորագույն բարձր տեխնոլոգիաների մասնաբաժինը: Ի դեմ, վերջինիս, ինչպես նաեւ ոսկերչական գործարանի շահագործումից հետո ենթադրվում է, որ ամբողջ տարածքը կդառնա հայկական ադամանդագործության ու ոսկերչության կենտրոն:

Տես էջ 2

ՈՍԿԵՓԱԿ

ՀԱՍՏԱՏԱԿԱՄ

Աժ Վերահսկիչ պալատի հաշվետվությանը պետք է արձագանքի դատախազությունը

Խորհրդարանը վճռական է՝ շարաշահումների դեմ պայքարում

1999 թ. Աժ Վերահսկիչ պալատի հաշվետվության արդյունքներով պարզվել է, որ շուրջ 9 մլրդ դրամ գումարի չարաշահումներ են տեղի ունեցել, բյուջետային այս գումարները տարբեր վարկային ծրագրերի գործունեության շրջանակներում փոփոխվել են եւ անարդյունավետ օգտագործվել: Երեկ պետական հարցերի մշտական հանձնաժողովն իր նիստում որոշում է ընդունել օգոստոսին ՎՊ հաշվետվության կապակցությամբ հրավիրել խորհրդարանական լսումներ, որին իբրեւ պատասխանող կողմ կհրավիրվեն ՀՀ կառավարության, ինչպես նաեւ հանրապետական դատախազության ներկայացուցիչները: Լսումներից հետո խորհրդարանը, ինչպես էներգետիկ ոլորտում ուսումնասիրություններ կատարող ժամանակավոր հանձնաժողովի պարագայում եղավ, օրենքի նախագիծ կներկայացնի, ըստ որի մինչեւ հոկտեմբերի 1-ը դատախազությանը եւ կառավարության շահագրգիռ օղակներին ժամանակ կտրամադրի պարզելու հաշվետվության մեջ առկա փաստերի իսկությունը եւ հետորեն պատժելիությունը, որից հետո նրանք կներկայանան Աժ ամփոփելու քննության վերջնարդյունքը: Պետական հանձնաժողովի նախագահ Վիկտոր Դալլաքյանն «Ազգին» մանրամասնեց, որ այս նախաձեռնությամբ խորհրդարանը կստանձնի սահմանադրորեն իրեն վերապահված հսկողական գործառույթները, որոնք մինչ այսօր չեն իրականացվել, եւ խորհրդարանը եղել է միայն արձանագրողի դերում, իսկ այդ արձանագրությունները մնացել են «ծայն բարբառո հանապատի»: Պետական գումարներն անարդյունավետ ծախսողները պետք է գիտակցեն, որ իրենք պատասխանատվության կենթարկվեն եւ ֆինանսապես, եւ հետորեն:

Պետական եւ ներքին գործոց, ԱԱ, պաշտպանության հարցերի հանձնաժողովները երեկ նաեւ միասնաբար որոշել են դիմել հանրապետական դատախազություն, էներգետիկայի եւ ՆԳ նախարարություններ պատգամավոր Ռուբեն Գեւորգյանի հայտարարության կապակցությամբ: Պատգամավորը դիմել էր երկու հանձնաժողովներին մղելով. «Սկսած 2000 թ. հուլիսի սկզբից ՆԳ մարմինները լայնածավալ ստուգումներ են անցկացնում իմ եւ իմ մերձավոր շրջապատի նախաձեռնությամբ հիմնադրված ձեռնարկություններում, հաստատություններում ակնհայտ միտում դրսեւորելով հայտնաբերել կամ ստեղծել ինձ եւ իմ գործողությունը վարկաբեկող փաստեր... Արդեն իսկ կազմված են կեղծ արձանագրություններ անհիմն պարտքերի ու տուրքերի վճարումների պահանջով, պետական ծառայություններից հեռացված են մարդիկ զուտ Գեւորգյան ազգանունը կրելու համար, այդ թվում նաեւ ինձ հետ որեւէ ազգակցական կապ չունեցողներ»: Աժ երկու մշտական հանձնաժողովները որոշել են պարզել վերոհիշյալ ստուգումների օբյեկտիվությունն ու օրինականությունը. «Քանի որ հարցը հասարակական հնչեղություն է ստացել, դրա քաղաքականացումից խուսափելու համար անհրաժեշտ է նախարարների եւ գլխավոր դատախազի անձնական վերահսկողության եւ պատասխանատվության ներքո լիովին բացառել աղտոտիություններն ու բռնությունները պատգամավորի եւ նրա հարազատների նկատմամբ»: Այսպիսով խորհրդարանին թեժ ամառ է սպասվում իրավապահ մարմինների եւ դատախազության հետ հարաբերությունների ծիրում:

Ն. Պ.

ՍԵՆԱՏ

ԱՄՆ-ը Հայաստանին կհատկացնի 89 միլիոն դոլար

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 23 ՅՈՒՆԻՍ, ՏՆԱՐԲ: 2001 թ.-ին ԱՄՆ-ի Հայաստանին հատկացնելիք օգնությունը պետք է կազմի 89 մլն դոլարից ոչ պակաս: ԱՄՆ Սենատի կողմից հունիսի 22-ին ընդունված օրինագծում նշվում է նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համար միջոցների հատկացման անհրաժեշտությունը:

Ընդունված օրինագծում հաշվի են առնված սենատորներ Միք Մաքֆոնելի եւ Սեմ Բրաունբեքի կողմից առաջարկված ուղղումները, որոնք նպատակաուղղված են ահաբեկչական երկրների ցուցակում չընդգրկված երկրներին հակակոռուպցիոն եւ կրթական աջակցություն ցույց տալուն:

Օրինագիծն աջակցում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանն նպատակաուղղված ջանքերին՝ դրանով իսկ օգնելով վստահելի հարաբերություններ հաստատել կողմերի միջեւ եւ աղահովել հաշտության գործընթացը, նշել է Կոնգրեսի կապերի կոմիտեի նշորեն Բրայան Էդոունին:

Նշենք, որ տվյալ օրինագիծը հունիսի 21-ին արդեն ընդունվել է Արտաքին հատկացումների կոմիտեի կողմից: Նա պահպանում է Ազատության աջակցության ակտի 907 հոդվածը, որն արգելում է ԱՄՆ-ի ուղղակի կառավարական օգնության հատկացումն Ադրբեջանին՝ Հայաստանը եւ Լեռային Ղարաբաղը շրջափակման ենթարկելու համար: Բացի դրանից, օրինագիծը նախատեսում է ԼՂՀ-ին 20 մլն դոլար մարդասիրական օգնության հատկացում եւ Լեռնային Ղարաբաղի գծով ԱՄՆ բարձրաստիճան ներկայացուցչի երկար ժամկետով նշանակում:

ՀԱՄԱՌՈՏ

Թուրքիայում վախենում են հայկական եւ հունական լոբբիներից

ՍՏԱՄԲՈՒԼ, 23 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Թուրքական «Ցումհուրիեթ» օրաթերթը գրում է, որ մինչեւ ԱՄՆ-ի նախագահական ընտրությունները Հանրապետական ու Դեմոկրատական կուսակցությունների մրցակցությունը կարող է վաս վիճակի մեջ դնել Թուրքիային: Ըստ թերթի, «այն պայմաններում, երբ կողմերը ձգտում են լրացուցիչ քվեներ շահել, հակաթուրքական դիրքորոշում ունեցող հայկական, հունական եւ հույն-կիպրական լոբբիների ձայներն առավել կարեւորություն են ստանում: Պատեհ առիթից օգտվելով, վերջիններն ակտիվացրել են իրենց գործունեությունը եւ փորձում են մինչեւ Քլինթոնի վարչակազմի ժամկետի ավարտը անցկացնել հակաթուրքական որոշումներ», գրում է «Ցումհուրիեթը»:

Հուլիսի 1-ից Հայաստան-Ռումինիա երկկողմ վիզային կարգ

ԵՐԵՎԱՆ, 23 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: 2000 թ. հուլիսի 1-ից Հայաստանի Հանրապետության սովորական անձնագրեր կրող քաղաքացիների համար կիրառվելու է վիզային կարգ՝ Ռումինիա մուտք գործելու համար: Ինչպես հայտնեցին ՀՀ ԱԳՆ հասարակայնության հետ հարաբերությունների վարչությունից, Ռումինիայի վիզա ստանալու համար պետք է դիմել Երեւանում Ռումինիայի դեսպանություն՝ Երեւան, Քեռու փ. 46. աշխատանքային ժամերը՝ 9.00-17.00, երկուշաբթի-ուրբաթ օրերին:

ՍԵՆԱՏ

Ադամանդագործությունը Հայաստանում ծաղկող հատուկենտ ոլորտներից մեկն է

Սկիզբը էջ 1

Ի դեպ, վերջինիս, ինչպես նաեւ՝ ոսկերչական գործարանի շահագործումից հետո ենթադրվում է, որ ամբողջ տարածքը կդառնա հայկական ադամանդագործության ու ոսկերչության կենտրոն: Արդեն ուրվագծվում է նաեւ, որ Հայաստանի խոշորագույն արդյունաբերական կենտրոններից լինելուց բացի DCA-ն իր հարակից գործարաններով կարող է դառնալ նաեւ տուրիստների այցելության սիրելի վայր, երբ այստեղ կբացվեն նաեւ սպասարկման սրահն ու խանութը: Գ. Աբրահամյանը, որը ՀԱԳՄ նախագահ Ա. Վարդանյանի բնորոշմամբ ներկայումս «Հայաստանի լավագույն, եռանդուն ու երիտասարդ բիզնեսմեններից մեկն է», «Ազգի» հարցին ի պատասխան տեղեկացրեց, որ մինչ այժմ DCA-ում կատարվել են 7-7,5 մլն դոլարի ներդրումներ, «որից մի լումա անգամ չի վերադարձվել»:

DCA ՓԲԸ-ն հիմնադրվել է 1998 թվականին: Նրա ողջ կանոնադրական կապիտալը, ՀՀ կառավարության ու բրիտանական «Ֆուրֆանո լիմիթիդ» ընկերության միջեւ կնքված պայմանագրով 1999-ին անցավ «Ֆուրֆանո»-ին: 100 տոկոսանոց այս բրիտանական ընկերությունը անցյալ տարի արտահանել է շուրջ 32 մլն դոլարի պատրաստի արտադրանք: 2000 թվականին սպասվում է արտադրանքի 20 տոկոսի աճ, այս տարի արտահանման ծավալները կարելի է հասցնել մինչեւ 45 մլն դոլարի, վստահեցրեց Գ. Աբրահամյանը: Ընկերության գործունեությունը չի սահմանափակվում միայն Երեւանով, ունի 7 մասնաճյուղ, որոնցից երեքը՝ Վայոց ձորում ու ԼՂՀ-ում: DCA-ում ու նրա մասնաճյուղերում միասին աշխատում է մոտ 700 մարդ՝ միջինը 250 դոլար աշխատավարձով: Հայկական ադամանդի շուկաների քարտեզը եւս բավականին տարածված է: Արտադրանքի մոտ 25 տոկոսն իրացվում է ԱՄՆ-ում, 30 տոկոսը՝ Եվրոպայում, 15 տոկոսը՝ Հեռավոր Արեւելքում: DCA-ն ամսական ներմուծում է մինչեւ 8000 կարատ ալմաստ հումք՝ ադամանդագործության գերհսկա հարավաֆրիկյան «Դե Բիրս» սինդիկատի կողմից, որի անդամներից մեկն էլ բրիտանական «Ֆուրֆանո»-ն է: Ադամանդագործությունը, լինելով առանձնահատուկ ոլորտ, փաստորեն պահանջում է առաջին հերթին որակ, առա՝ փոխադարձ վստահություն գործընկերների միջեւ: Հիշեցնենք նաեւ, որ «Դե Բիրսի» բարեհաճությանն ու վստահությանն արժանացած Գ. Աբրահամյանի եղբայրը՝ ռուսական «Սոգլասիե» կոնցեռնի նախագահ Արա Աբրահամյանը նույնպես այդ ոլորտի խոշոր ձեռնարկատեր է: Հետեւաբար, ադամանդագործությունը Աբրահամյանների համար կարելի է ընտանեկան շնորհ ու բիզնես համարել: Նախատեսվում է նաեւ Հայաստանում բացել «Սոգլասիե»-ի հայաստանյան մասնաճյուղի՝ «Սոգլասիե պլյուսի» մասնաճյուղը, որը մի փոքր հետաձգվում է նաեւ ադամանդի հումքի ներկրման հայ-ռուսական պայմանագրի վերակնքման ձգձգման պատճառով, որի հետեւանքով մոտ 30 հազ. կարատ այդպես էլ չներմուծվեց Հայաստան: Այս տարեսկզբին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանն, այցելելով գործարան, խոստացել էր աջակցել պայմանագրի գործարկմանը, սակայն մինչ այժմ խնդիրը հետաձգվում է ու կախված է երկու երկրների օրենսդիր մարմինների վավերացումից, որի համար, Գ. Աբրահամյանի հավաստմամբ, ժամանակ ու համբերություն է պահանջվում:



DCA-ն, փաստորեն, հաջող ներդրումային օրինակ է արտասահմանցիների համար: «Այս գործարանի առկայությունը Հայաստանի համար հաջողության պատմություն է», «Ազգ»-ի հետ զրույցում ասաց դեսպան Թիմոթի Ջոնսը: Ըստ նրա, գործարանը ապացույց է այն բանի, որ Հայաստանում կարելի է ծավալել ներդնողների համար շահավետ արտադրություն, նաեւ, որ Հայաստանը կարող է արտահանել միջազգային ասպարեզում մրցունակ արտադրանք: Ադամանդագործությունը պահանջում է ինտելեկտուալ ներուժ, ինչը, դեսպանի կարծիքով, Հայաստանի ամենամեծ հարստություններից մեկն է: Այս ոլորտը զարգացման մեծ հեռանկարներ ունի նաեւ մի երկրորդ պատճառով՝ չի պահանջում մեծ տրանսպորտային ծախսեր, ինչպես մյուս ոլորտները: Դեսպանը խոստովանեց, որ երեկվա այցը DCA առաջինը չէր, նա մի քանի անգամ եղել է այստեղ եւ համոզվել, որ ի տարբերություն հայաստանյան ուրիշ գործարանների, DCA-ի տարածքը օգտագործվում է հնարավորինս արդյունավետ, այստեղ մարդիկ ներդրել են իրենց ինտելեկտը, եռանդն ու էներգիան, որի համար էլ հաջող արդյունքներն ակնհայտ են:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Փորձագետները Հայաստանին խորհուրդ են տալիս չկրկնել այլ երկրների սեփականաշնորհման սխալները

ԵՐԵՎԱՆ, 23 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Լեհաստանի էլեկտրաէներգետիկական հատվածի սեփականաշնորհման եւ Հայաստանի ու Լեհաստանի էլեկտրաէներգետիկայի համեմատական վերլուծության հարցերին էր նվիրված Երեւանում ամերիկյան Hagler Bailly էներգետիկական ընկերության կազմակերպած սեմինարը:

Նշելով, որ սեմինարի նպատակն է, որ Հայաստանում ավելի շատ տեղեկանան ուրիշ երկրների սեփականաշնորհման փորձի մասին, լեհական DGA էներգետիկական ընկերության ներկայացուցիչ Պավել Ռածիլովսկին ընդգծեց. «Մի կրկնեք ուրիշների սխալները, քանի որ դա կրկնակի թանկ արժի»:

Նա նշեց նաեւ, որ Հայաստանին էներգետիկայի ոլորտում մրցունակության աղահովման համար անհրաժեշտ է էներգետիկական շուկան ստեղծել ավելի արագ, քան այլ երկրներում: Սակայն մրցունակ շուկա անհնար է ստեղծել առանց անկախ կանոնավորող մարմնի. «Եթե դուք ձեր էներգասեկտորը չդարձնեք ավելի մրցունակ եւ արտադրողական, կարող է պատահել, երբ վառելիքի մատակարար երկրները դադարեն այն վաճառել եւ սկսեն ձեզ էլեկտրաէներգիա վաճառել», հայտարարեց Պ. Ռածիլովսկին: Ըստ պրն. Ռածիլովսկու, սեփականաշնորհման գործընթացում սկզբնական քայլերն են նախասեփականաշնորհային վերլուծության առկայությունը, ձեռնարկության արժեքի գնահատականը, սեփականաշնորհման հայեցակարգի առկայությունը եւ այլն:

Սեմինարում հատուկ ուշադրություն հատկացվեց բաշխիչ էլեկտրացանցերի ընկերությունների սեփականաշնորհման հարցին: Մասնավորապես նշվեց, որ այդ ընկերությունների համար արժեքը որոշողներ են սպառողների կառուցվածքը, տարածաշրջանի տնտեսական զարգացումը, որտեղ գտնվում է ընկերությունը, կատարված ներդրումները եւ այլն:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 9 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թեմ 562863, AT&T (3742) 151065,
e-mail: azg2@arm.co.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՀՐԱՅՐ ՁՕՐԵԱՆ / հեռ. 529353
Համակարգչային ծառայութիւն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՈՍԿԵՓԱՅԻՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Ղարաբաղյան ահաբեկչության նախաքննությունը դատաքննչական դիտակետից

«Մարտի 22-ի մահափորձը ինքվում է աշառու»

«Ամենասկզբից իսկ իբրեւ քրեական գործ մարտի 22-ի մահափորձը քննվում էր ոչ օբյեկտիվ: Հասարակական նման մեծ հնչեղություն եւ ազդեցություն ունեցող գործերում նախաքննության ընդունված կարգ կա, ես ինքս քննիչ եմ եղել եւ գիտեմ՝ մշակվում են տարբեր վարկածներ, որոնվում են դրդապատճառներ, դրդառիթներ: Իսկ այս դեպքում վերջին մի վարկած եւ այդ վարկածով էլ առաջ են գնում, հստակ որոշել են՝ այսպես մարդ է մասնակցել եւ վերջ՝ ձեռքի հետ էլ Բաբայան ընտանիքի բոլոր տղամարդկանց, առանց խորանալու՝ գործի հետ կապ ունե՞ն, թե՞ ոչ, կալանավորեցին», «Ազգին» հավաստեց Սամվել Բաբայանի թիկնապահ Վարուժան Մելքումյանի եւ Վարդան Թաշչյանի փաստաբան Արմեն Մանուկյանը: Դատապաշտպանը վկայեց, որ առ այսօր, երբ նախաքննությունը պաշտոնապես ավարտված է, մարտի 22-ի ահաբեկչության գործի հետ կապված կան ձերբակալվածներ, որոնց մասնակցությունը կամ հանցավորության աստիճանը հստակ չէ եւ կասկածահարույց է: Վարդան Թաշչյանին քննչական խումբը համարում է Սամվել Բաբայանի քաղաքական խորհրդական. «Թե ինչ խորհրդական, պարզ չէ, իբր Սամվել Բաբայանը նրա խորհուրդներով է առաջնորդվել, բայց դա բնավ այդպես չէ», այսպիսին է պաշտպանի կարծիքը:

Արմեն Մանուկյանը համոզված էր, որ գործն ի սկզբանե պետք էր բաժանել առանձին մասերի, եւ այն դրվագները, որ մասնակից էին զինվորականներին, պետք է հանձնվեին զինվորական դատախազության վարույթ: Դատապաշտպանի պնդմամբ, ԼՂՀ զինվորական դատախազությունում աշխատում են հիմնականում Հայաստանից գործուղված մասնագետ եւ փորձառու քննիչներ: Սակայն գործն ընթացել է այլ հունով, եւ այսօր նախաքննությունը ԼՂՀ հանրապետական դատախազության վարույթում է:

Յուրաքանչյուրի մեղսակցության աստիճանը պետք է որոշի դատարանը, մինչ այդ նախաքննության ընթացքում, համաձայն քրեական, քրեական դատավարական օրենսգրքի, փաստաբանները պետք է մասնակցեն գործին սկզբից եւեթ՝ իրենց պաշտպանյալներին տեղեկացնելով, թե ինչ իրավունքներ ունեն: Ղարաբաղում մարտի 22-ի գործի հետ կապված այլ մթնոլորտ է. Սամվել ու Կարեն Բաբայանների, ինչպես նաեւ Վարդան Թաշչյանի դատապաշտպաններին այդպես էլ չի հաջողվում տեսակցել իրենց պաշտպանյալների հետ: Օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգին, ըստ Արմեն Մանուկյանի, հետեւողական խոչընդոտում են: Ստեփանակերտի ազգային անվտանգության մեկուսարանը, ուր գտնվում են Սամվել, Կարեն Բաբայանները եւ Արմեն Մանուկյանի պաշտպանյալ Վարդան Թաշչյանը, անմատույց է: Այս երեքի պաշտպաններից եւ հարազատներից ոչ մեկին չի հաջողվում տեսնել եւ հավատիանալ քննիչների կողմից շրջանառության մեջ դրված ցուցմունքների իսկությանը, ինչպես նաեւ կալանավորվածների ինքնազգացողությանը:

Երբ Արմեն Մանուկյանին խնդրեցինք պարզաբանել, թե ո՞վ է խոչընդոտում օրենքով սահմանված իրենց իրավասությունների իրականացմանը, նա նշեց. «Քննչական խումբը ղեկավարում է գլխավոր դատախազ Մարատ Ղազարյանը, սակայն անհասկանալի է, թե ինչու առ այսօր նրա հետ տեսակցում է միայն պետության կողմից նշանակված դատապաշտպանը, իսկ Արմեն Մանուկյանին այդ հնարավորությունը չի ընձեռվում: Բացի այդ՝ թեեւ 84 հոդվածով չի նախատեսվում մեղադրյալի գույքի բռնագանձում, սակայն Վարդան Թաշչյանի բնակարանում գույքագրման անվան տակ բռնագրավվել են համակարգիչները, հեռուստացույցը եւ այլ իրեր: Թեեւ Վարդան Թաշչյանի անունը եւ ազգականները եկել էին Ստեփանակերտ, սակայն նրանց այդ գույքը չի վերադարձվել: Իսկ համակարգիչների բռնագանձումը մութ կասկած է արթնացնում, հանգի այս կերպ կարելի է նաեւ հեռուն գնացող գործեր կատարել՝ նախատեսված ահաբեկչության, հեղաշրջման եւ այլ սյուժեներով:

Արմեն Մանուկյանի խոսքերով, քննիչները ինքնաշիտ գործարքներ են առաջարկում փաստաբաններին, դիցուք՝ իրեն Թաշչյանի քննիչներից մեկն ասել է. «Եթե ուզում ես Վարդանին հանդիպել, Սաթիկ Սեյրանյանին բեր Ղարաբաղ, թույլ կտանք կես ժամ տեսնել իրեն»: Արմեն Մանուկյանը հեգնանքով հակադարձել է. «Ուրիշ ի՞նչ գործարք եք առաջարկում, գուցե երկու հոգու էլ բերեմ, բաց թողնեք»... Մեկնաբանել քրեական այսպիսի գործերի նախաքննությունը եւ կանխատեսումներ կատարել դրանց ընթացքի վերաբերյալ՝ անընդունելի եւ վտանգաւորույց է, սակայն փաստ է, որ օրենքի գերակայությունը պետք է լինի ամենուր՝ անկախ մեղադրյալների հանդեպ ունեցած վերաբերմունքից, քաղաքական իրավիճակից:

Հունիսի 18-ին ԼՂՀ-ում ավարտվեցին խորհրդարանական ընտրությունները, գուցե այս ամենից հետո քուրդ կդարձի: Արմեն Մանուկյանը հուսով է, որ ինքն ի վերջո կկարողանա հանդիպել իր պաշտպանյալին եւ պարզել, թե ո՞վ ի՞նչ ցուցմունքներ է գրել եւ ի՞նչ պայմաններում:

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Դիլիջանն առանց գազի

ՏԱՎՈՒՇ, 23 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հունիսի 21-22-ին Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի բնակիչները կարճ ժամանակով փակել են Երեւան տանող ավտոմայրուղին: Դիլիջանցիների պահանջներն էին՝ վճարել կենսաթոշակները եւ թույլատրել վառելափայտ հայթայթել Դիլիջանի անտառներից:

Գոյացած պարտքերի համար դիլիջանցիներին բնական գազի մատակարարումը դադարեցված է, եւ վառելափայտի կարիքն առավել քան զգացվում է: Հատկանշական է, որ հենց հունիսի 21-ին Դիլիջանում վճարվել են մարտ ամսվա կենսաթոշակները, այն դեպքում, երբ մարզում բաշխվել են փետրվարի թոշակները:

Հունիսի 23-ի դրությամբ բնական գազի մատակարարումը դեռեւս չի վերականգնվել:

Փաստաբան Պահլավունին կարծում է, որ հոկտեմբերի 27-ի ահաբեկչությունը պատվիրված էր

ԵՐԵՎԱՆ, 23 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հոկտեմբերի 27-ի գործով նախաքննությունը կավարտվի 2-3 օրից: Հայտնելով այս մասին, գործով գլխավոր մեղադրյալ Նաիրի Հունանյանի նախկին պաշտպան Արտաշես Պահլավունին կարծիք հայտնեց, որ ահաբեկչական ակտը կազմակերպված է եղել պատվիրատուի կողմից, ինչը սակայն չի բացահայտվում: Պահլավունին որեւէ կերպ չմեկնաբանեց իր նախկին պաշտպանյալի հայտարարությունն այն մասին, որ հրաժարվում է նախկինում տված իր ցուցմունքներից, քանի որ դրանք վերցվել են ծեծի եւ խոշտանգումների ազդեցության տակ:

Պահլավունին հունիսի 16-ից իր պաշտպանյալի հետ փոխադարձ համաձայնության գալով՝ դադարել է պաշտպանել նրա շահերը: Ըստ փաստաբանի, Նաիրի Հունանյանի հետ ի սկզբանե պայմանավորվածություն է եղել միայն նախաքննության փուլում նրա շահերը պաշտպանելու մասին: Նաիրի Հունանյանի շահերի պաշտպանությունը ստանձնել է փաստաբան Արա Զաքարյանը:

Պաշտպանությունից հրաժարվելու մասին համաձայնության են եկել նաեւ գործով մեղադրյալ Կարեն Հունանյանը եւ նրա պաշտպան Կիմա Մելքոնյանը: Կ. Հունանյանի նոր պաշտպանի հարցը կլուծվի առաջիկայում:

ՀԱՄԱՌՈՏ

Հայաստան-Իրան տրանսպորտը զարգացնելու նպատակով

Այսօր պաշտոնական մեկօրյա այցով Հայաստան է ժամանել Իրանի Իսլամական Հանրապետության ճանապարհների եւ հաղորդակցության նախարար Մուհամադ Հոջաթիին, տեղեկացնում են ՀՀ տրանսպորտի նախարարության լրատվական ծառայությունից:

ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար Էդուարդ Մադաթյանը, ընդունելով վերջինիս գլխավորած պատվիրակությանը, որի կազմում էր նաեւ Հայաստանում Իրանի դեսպան Մ. Քոլեյնին, նշեց, որ հայ-իրանական հարաբերությունները կարող են փոխշահավետ համագործակցության եզրեր գտնել, մասնավորապես տրանսպորտի բնագավառում: Բանակցությունների հիմնական թեման մնում էին օդային եւ ցամաքային փոխադրումները: Կարեւորելով տարանցիկ բեռնափոխադրումների հարցը, նախարար է. Մադաթյանն իրանական կողմին առաջարկեց մինչեւ Զուլֆա իրանական սահմանը հասելու թույլատվություն ունեցող հայկական մեկնաբանների համար տարանցիկ դարձնել պարսկական ողջ տարածքը:

Օդային տրանսպորտի ոլորտում երկու կողմերն էլ իրատեսական համարեցին Երեւան-Թեհրան, Երեւան-Թավրիզ չվերթերի վերաբացումը:

Ազատվել են աշխատանքից

Օրերս «Հայկական ավիաուղիներ» ՊՓԲԸ-ի տնօրենի հրամանով «Հայկական ավիաուղիներ» փոխադրումների վարչության երկու աշխատակիցներ ազատվել են զբաղեցրած պաշտոնից իրենց աշխատանքային պարտականություններում թերանալու պատճառով, տեղեկացնում է ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության լրատվական ծառայությունը: Աշխատակիցների, որոնց անունը չի նշվում, ազատման պատճառը մասնավորապես եղել է գյուղմթերքների արտահանումների կազմակերպչական գործընթացում քաշքշուկ եւ խոչընդոտներ առաջացնելը:

Հանովերում անձրեւ են գուշակել. Նոյյան տապանի փորձված ծածկը քանի՞սը կնախընտրեն

Սկիզբը էջ 1

Ինչպես մեզ հաղորդեց ԳԴՀ-ում ՀՀ դեսպանատան առաջին քարտուղար Վահագն Մելիքյանը, ով մեկ տարուց ավելի զբաղվում է «Էքսպո-2000»-ում Հայաստանի մասնակցության հարցերով, արվել է հսկայածավալ գործ՝ հնարավորինս նվազ միջոցներով: Առայժմ դժվար է արձանագրել, թե հենց հունիսի 24-ի դրական ազդակներից ծնված քանի ներդրումային ծրագրի արահետ կնշմարվի Հայաստանում: Հայաստանի բյուջեն համենայն դեպս դրանից հույսը չի կտրում:

Մի քանի շաբաթ առաջ գերմանական հեռուստատեսության երեք հեռարձակած «Նոյյան տապանի առեղծվածը» գիտահանրամատչելի ֆիլմը շատերը դիտեցին. հետաքրքրությունը մեծ էր: Երեկ քանի՞ գերմանացի, բաց անելով «Էքսպո»-ի ինտերնետային էջը, կտատի այսօր ոտք դնել Հանովերում իջեւանած «Նոյյան տապան», կարող ենք հաղորդել երեքշաբթի օրվա մեր նյութում: Մայիսի 31-ին նույն Հանովերում հակաէքսպոյական բողոքի ցույցին զուգահեռ շամպայնով, հրավառությամբ, ԳԴՀ կանցլերի ձեռամբ բացված «Էքսպոն» սպասվածի չափ այցելու դեռ չի գրանցում: Կազմակերպական աշխատանքն էլ կատարելապես ավարտին չի հասցված. հենց իրենք՝ կազմակերպիչներն են խոստովանում, որ այսպես մեծածավալ աշխատանք չէին երեւակայում: Շարքային եվրոպացու համար «Էքսպոն» բարձր գների պատճառով շարունակում է խրտնեցնող մնալ: Հարեւանս ինձ հարցնում է. «Իսկ ձեր հայկական տաղավարը լիովին անվտանգ է»: «Իհարկե, մանավանդ ձեր անձրեւային երկրում», պատասխանում եմ՝ թեպետ գիտեմ ի՞նչ է սկսարկում: Գերմանական տաղավարում մեկը բարձունքից վայր էր ընկել ու ճակատագրական վնասվածք ստացել: Հուսանք, որ տխուր գույները չեն ստվերի անդուլ եռանդ ու միջոցներ ամբարած այս քաղաքի դեմքը, մանավանդ որ իսկապես հրաշալի մտահղացումներ կան այս օրյակում դրանց մասին եթե ուզենաս, չես հիշի:

Եթե այսօր օդերեւութաբանների կանխատեսած անձրեւն իսկապես պատռի Գերմանիայի արեւային շաբաթվա շղարշը, միգուցե երեւակայելի առօրյա դառնա: Այսօր պիտի վազանք, չէ՞, Հանովեր՝ կանգնելու Նոյյան տապանի վրա ու «Էքսպո-2000»-ի Հայաստանի եռագույն ժապավենը կտրելով փրկելու Հայաստանի տեղը չիմացողներին անգիտությունից: Մի բարի պատիկ՝ Նոյ նահապետը, այցելուների ձեռքերին աղավնիներ է նկարելու, ու մեկ էլ դրանք թեւ են առնելու ու երկինք բարձրանան: Հեքիաթ չէ, էլի ի-

ռականություն է՝ հենց հիմա լավաբ են թխում, հենց հիմա Հայաստանի ու հայերի մասին հազար ու մի լավ բան շշուկով են ասում, օտարները «Բջնի», «Ջերմուկ» են խմում, գովում գինին ու կոնյակը, զարմացած են՝ դո՞ւք էլ գարեջուր ունեք: Իսկ երբ բանը «Արմենիկումին» է հասնում, ծիծաղում են՝ որեւէ գերմանացու արդեն բուժեցի՞ք: Լավ, ուզում եք հավատացեք, ուզում եք՝ մի հավատացեք, հայկական տաղավարը թեեւ զվարճալիին իր խայծը չի դարձրել (ինչն այս ցուցահանդեսի հենքն է) եւ հավակնում է լուրջ կոչվելու դերին, բայց այցելուների հետաքրքրություն արդեն գրանցել է: Թեեւ որեւէ ձեւով տաղավար այցելուների թիվը չի գրանցվում, բայց, ասում են, տպավորությունների առաջին հաստափոր գիրքն արդեն դատարկ էջեր ինչ ունի, իսկ քանի՞սն են այցելում առանց նշում անելու: Լավաբ հո՞ն է զգլխիչ, թե՞ գինին է բունդ եղել, շատերն այնտեղ արբեցած տողեր են թողել: Այսօր, հուսանք, դրանք ոչ միայն տպավորությունների գրքում, այլեւ գերմանական մամուլում կգտնենք: Մանավանդ որ, ինչպես տեղեկացանք, բազմաթիվ օտար լրագրողներ են ցանկություն հայտնել այսօր հենց այս ցամաք այցելելու՝ միգուցե բաց աչքերով երազ տեսնելու հույսով:

ԱԶԳ

Աղեսի գոսի

Ասկվածատրաcի կադրային բանկում «Լիժնիկ Մոսոն», Բուտիկն ու «Մորքուր Սամվելը»

Կամ ինչ է ստացվում, երբ 15 հազար ձայնով են քաղաքապետ ընտրվում

«Աղեսի գոսի» խորագիրը տվյալ դեպքում ավելի քան իմաստավորված է: Որքերs Քոչարյանի նախընտրական ծրագրում նպատակ էր դրված ծերբազատվել «աղեսի գոսի» հասկացությունից ոչ միայն շինություններ ի ու արտադրական կառողություններ վերականգնման իմաստով, այլեւ՝ բարոյահոգեբանական բարդույթի հաղթահարման:

Թվում է, թե երկրորդ խնդիրն առաջինից հեշ չէ, քանի որ ներառում է հասարակության հոգու առողջացման անհրաժեշտությունը, իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ աղեսի գոսու բնակչությունը կզգա պետության ու իշխանությունների հեսեւողական աշխատանքն՝ արհավիրքի բոլոր հետեւանքները վերացնելու գործում: Այսօր մասնավորապես Գյումրիի հանդեպ նման ընդվզումները դրսեւորվում են միայն նախագահ Քոչարյանի կողմից: Սակայն համաձայնենք, որ պետություն ու իշխանություն հասկացությունները լոկ նախագահով չեն պայմանավորվում: Ինչպիսի լավ ծրագրեր էլ տաքուկ տեղ առահովեց խորհրդարանում՝ մոռանալով ե՛ւ Գյումրին, ե՛ւ գյումրեցիների ցավն ու հոգսը: Նրան ծառայություն մատուցածներն էլ աթոռներ զբաղեցրին Միխայել Վարդանյանի ղեկավարած քաղաքապետարանում (Կարինե Ավդալյան՝ մշակույթի բաժնի վարիչ, Ասcոs Պետրոսյան՝ աշխատակազմի ղեկավար եւ այլն):

«Կոլայի տղա» Վարդան Ղուկասյանը, Միխայել Վարդանյանից հետո ընտրվելով քաղաքապետ, առաջին քայլերը սկսեց կադրային տեղաշարժերից: Հայտարարելով, որ իր սկզբունքն է աշխատել միայն ազնիվ, իրենց անունը չվարկաբեկած մարդկանց հետ, նա առաջին հրամանով փոխքաղաքապետ նշանակեց քաղխորհրդի գործկոմի աշխատանքները ծախողած նախկին նախագահ Կաոլեն Համբարձումյանին, այնուհետեւ խորհրդական նշանակեց ժամանակին քաղաքապետի պաշտոնից հեռացված, պաշտոնական դիրքի չարաշահման համար դատական պատասխանատվության ենթարկված Լեւոն Ադամյանին: Աշխատակազմի ղեկավար ֆոնդի բաժնի վարիչ է նշանակվել «ջինսի» գործով դատված Հարություն Ղարիբյանը: Ի դեպ, Մովսես Ջուհարյանը հավաքել է բոլոր ԲՇՏ-ների կնիքները իր մոտ, այսինքն՝ տեղեկանքը վավերացնելու համար քաղաքացիները պետք է գնան ԲՇՏ, հետո՝ Ջուհարյանի մոտ, որի պատճառով ամեն օր բազմամարդ հերթեր են կուտակվում նրա աշխատավայրում: Զբաղվածության կենտրոն եւ սոցծառայություն ներկայացվող տեղեկանքի համար յուրաքանչյուր քաղաքացուց գանձվում է 400-ական դրամ, մինչդեռ դրանք անվճար են:

Քաղաքի գերեզմանատների վարիչներ են նշանակվել Վարդան Ղուկասյանի հոր ընկերները, նրա քաղամասի «հեղինակություններ» «ճգլ Հենդոն» (60 տարեկան) եւ «ժախի Արամը» (70 տարեկան):

Բարեկարգման գրասենյակի սեփականաշնորհումից հետո 34 տոկոսի չափով բաժնեմասը մնացել է որպես համայնքային սեփականություն: Չօգտագործելով հիմնարկի ուժերը, այդ 34 տոկոսի հիման վրա քաղաքապետարանը ստեղծել է նոր կազմակերպություն՝ նշանակելով ղեկավար իր մարդուն:

Փոխվել է նաեւ քաղաքապետարանի տրանսպորտային կառույցի աշխատակազմը: Նոր պետի գործունեությունը սկսվել է ներքաղաքային երթուղային տաքսիների անձնակազմի ընդհանուր փոփոխությամբ: Նպատակը մեկն է՝ տեղավորել ծառայություն մատուցած մարդկանց:

Քաղաքապետարանի կրթության բաժնի պետ է նշանակվել գանձապետարանի աշխատակից, միայն դիպլոմով մանկավարժ Հովհաննես Կարապետյանը: Նրա տեղակալ է նշանակվել 60 տարին անց Վարդան Հախվերդյանը, որը մանկավարժական ինստիտուտում նաեւ փիլիսոփայություն է դասավանդում: Եվ դա այն դեպքում, երբ բաժինը տնօրինում է նաեւ նախակրթարանների աշխատանքը: Նախակրթարանները միավորված են «Պարտեզ» ՓԲԸ-ում, որի գործադիր տնօրեն է նշանակվել քաղաքապետի հորեղբոր կինը՝ Մանուշակ Ղուկասյանը: Նախակրթարաններին հաց է մատակարարվում քաղաքապետի եղբորը պատկանող փռից: Փոքր հասանելիք գումարները վճարվում են, եւ դա այն դեպքում, երբ նախկին քաղաքապետարանի պարտքը «Գյումրի-հաց» ձեռնարկությանն առ այսօր չի վճարված: Փաստն առավել եւս անհասկանալի է, քանի որ բյուջետային դոտացիայի հաշվին մանկավարժների աշխատավարձն ավելացվել է 30 տոկոսով:

Սանմարման ՓԲԸ տնօրեն է նշանակվել քաղային հեղինակություն, աշխատանքային փորձ չունեցող Սաշիկ Զաքարյանը, որը կարճ ժամանակում հիմնարկը հասցրեց կործանման եզրին:

Նախկին քաղաքապետարանի աշխատակազմից մնացող «ազնիվներից» է անչափահասների, որդեգրման, խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Սուսաննա Մխիթարյանը: Այն Սուսաննա Մխիթարյանը, որը քաղաքապետարանի նախկին աշխատակազմի ղեկավար Ասcոs Պետրոսյանի աջ թեւն էր երեխաների արտագաղթը կազմակերպելու գործում ու որի սխրանքների մասին տվյալ բնագավառում վերջերս գրեց «Իրավունք» թերթը («Երեխաների արտագաղթի «բիզնես», «Իրավունք», թ. 3 (367), մայիս, 2000 թ.):

«Ի դեպ, «հներից» աշխատաստղում է մնացել նախկինում ոչ մի ձեւով իրեն չդրսեւորած առեւտրի բաժնի պետ Հարություն Հովհաննիսյանը, որի աշխատանքային կարողությունները «փայլուն» կերպով դրսեւորվեցին նոր քաղաքապետի օրոք. ոչինչ չի արվում առեւտրի կարգավորման համար, օրեցօր ավելանում են առեւտրի կետերը: Հիմնական շեշտը դրված է տուրքերի հավաքմանը՝ բյուջեն լցնելու նպատակով:

Նման «կառուցողական» գործունեության հետեւանքն էլ այն է, որ աշխուժացան կասկածելի անցյալ ունեցող անձնավորությունները, քաղային հեղինակությունները: Դրանց «ռազբորկաների» ընթացքում վերջերս կատարվեց երկու սպանություն: Հեղինակներն էին Մարոյի տղաներն ու ոմն Ուսանը: Երկուսն էլ՝ Վարդան Ղուկասյանի մտերիմներից, նրան իշխանության բերած ակտիվ մասնակիցներից: Լռելով այս դեպքերի մասին, որն քաղաքապետն իր հեռուստաելույթի ժամանակ ցինիկաբար հայտարարեց. «Այո, ուրիշ թեկնածու քաղաքապետի համար չկա, եթե կա՝ թող գա, ես տեղս կզիջեմ նրան»: Որքան համահունչ է Անդրանիկ Քոչարյանի 1994-ին արտասանած խոսքերին: Այո, որն Ղուկասյան, ժամանակն է, որ դուք զիջեք ձեր տեղը, իսկ թե ո՞ւմ՝ դա հետո ժողովուրդն ինքը կորոշի: Բայց այս անգամ ավելի սթափ ուղեղով, քանի որ ականատես դարձավ, թե 6 ամսվա ընթացքում ինչպես ժողովուրդ սիրող ու ժողովրդավարություն քարոզող Վարդանիկը դարձավ այն որն Ղուկասյանը, որը ՆԳՆ աշխատակիցների պատնեշը կանգնեցնելով քաղաքապետարանի մուտքի մոտ, իր իսկ ընտրողների հարցուպահանջից է պատսպարվում:

Այս ամենին մասնակից կարելի է համարել նաեւ Շիրակի մարզպետ Ֆելիքս Փիրումյանին, քանի որ վերը նշվածը կատարվում է նրա լռության պարագայում: Իսկ լռությունը, ինչպես հայտնի է, համաձայնության նշան է:

Նախ, որն մարզպետին բոլորովին չհետաքրքրեց քաղաքապետարանի աշխատակազմի մեծ մասին ազատելու փաստը, չնայած նրանցից շատերը աշխատանքային փորձ ունեցող, հարգանք վայելող, հարազատ քաղաքի հետ կապված անձինք էին: Ի՞նչ կարող է ասել մարզպետը Շիրակի մարզի եւ Գյումրի քաղաքի մասին, երբ չի ճանաչում մարդկանց, չգիտի նրանց ով լինելը, ծանոթ չէ նրանց կարողություններին: Ոչ միայն չգիտի, այլ ցանկություն էլ չունի ծանոթանալու, ուսումնասիրելու՝ ամեն օր ժամ առաջ դուրս գալով աշխատասենյակից (նա ոչ մի տեղ չի գնում, բացառությամբ քաղաքապետի տնից), ճգտում է ժամ առաջ հասնել երեւան, ուր պորում է իր ընտանիքը՝ ծախսելով ամեն օր ավտոբուսային պարկի 50 լ բենզինը: Ինքը փիչ էր, մի նորելուկի էլ բերել է աշխատակազմի ղեկավար, ավելի ստույգ՝ ժողովրդին ներս չթողնելու համար: Նա էլ նույն պարկի հաշվին իր «ժիգուլիով» է կատարում ամեն օր նույն երթուղին: Չի ասում մեծն Սեւակը՝ ապա մի հաշվեք, տեսեք, թե ինչ թվեր են ստացվում ամսվա կտրվածքով:

Ինչ վերահսկողության, աշխատանքների կազմակերպման մասին կարող է խոսվել, երբ կառուցվածքային փոփոխություններ անելու պատրվակով մարզպետի հրամանով լուծարվել է մարզպետարանի աշխատակազմը: Փոփոխությունների կատարման ժամկետը լրացել է մայիսի 23-ին, սակայն դրանք չկան ու երեւի չեն էլ լինի:

Անգործ մարզպետարանի աշխատակիցները չգիտեն՝ ինչո՞վ զբաղվեն, էլ ո՞ւր մնաց, թե մարզպետը զբաղվի քաղաքապետարանի կադրերով:

Նույն մարզպետի համաձայնությամբ նախկին նկարիչ-քաղաքապետը նշանակվեց «Հյուսիսային էլցանց» ՓԲԸ-ի տնօրեն՝ անտեսելով հիմնարկի կարեւորությունը եւ նշանակված տնօրենի, մեղմ ասած, այդ մասնագիտությունից հեռու լինելու հանգամանքը: Նա էլ, իր հերթին, ազատելով աշխատանքից Գյումրիի երկու մասնաճյուղի տնօրեններին, նշանակեց «Մուշուկ» իր վարորդի ընկերոջը (կրթություն չունի), իսկ «Կումայրիում»՝ այսպես կոչված «Ստամբուլ» շուկայի տնօրենին: Տարօրինակ զուգադիպությամբ արագ կարգով նորից պաշտոններ զբաղեցրին նախկին քաղաքապետարանի աշխատակազմից Միխայել Վարդանյանի հովանավորյալները՝ ֆինքաժնի պետ Լենա Ջիլավյանը («Հյուսիսային էլցանց» ՓԲԸ-ի փոխտնօրեն, երեւի քաղաքապետարանում աշխատած տարիներին «հատուկ» ծառայությունների համար), կոմունալ տնտեսության բաժնի պետ ու երկրաբանների հովանավորչությամբ Արտուշ Մովսիսյանը (շրջակա միջավայրի պաշտպանության Շիրակի տարածքային վարչության պետ), իրավական բաժնի պետ Հարություն Գեւորգյանը («Կումայրի» մասնաճյուղ):

Մարզպետի անտեղյակությունն ու անհրաժեշտությունը միայն անբացատրելի կադրային քաղաքականությամբ չէ, որ դրսեւորվում է: Վերջերս իրականացվող «Պիլոտ» ծրագրի համաձայն, ժամանակավոր կացարանները պետք է հանվեն: Սակայն արվում է ճիշտ հակառակը՝ թույլտվություն է տրվում նոր տնակներ տեղադրելու համար: Կարելի՞ է արդյոք զարմանալ այս հանգամանքից, եթե ՀՀ նախագահին կից աղեսի գոսու եւ նրա վերականգնման հանձնաժողովի նախագահը լինելով՝ նա 8 ամսվա ընթացքում չի անցկացրել ոչ մի նիստ կամ գոնե խորհրդակցություն որեւէ հարցի շուրջ: Եվ կարելի՞ է զարմանալ նման դանդաղկոտությունից, եթե 8 ամիս աշխատելուց հետո միայն՝ ս. թ. հունիսի 13-ին նրա հանձնարարությամբ կազմվել է համայնքներ այցելելու ժամանակացույց: Ի դեպ, որն Փիրումյանը խիստ զարմանք է արել վերջերս հայտնաբերելով, որ Գյումրիում կա մոտ 1400 փակ բնակարան: Հանձնարարություն է տվել անմիջապես հանձնաժողով՝ ստեղծել պատճառները պարզելու համար: Սակայն ինչո՞ւ այդքան ուշ, մի՞թե 8 ամիս էր հարկավոր մարզպետին՝ պարզելու այն, ինչը հայտնի է ամեն մի գյումրեցու: Եվ դեռ ինչքան ժամանակ է պետք մարզպետին համոզվելու համար, որ այսպիսի քաղաքապետի հետ «քարվան չես կտրի» ոչ այսօր, ոչ էլ մոտ ապագայում: Այն ամենով հանդերձ, ուզես թե չուզես, գալիս ես եզրակացության, որ շենքերի ու շինությունների վերականգնումը, բյուջետային միջոցների տրամադրումն աղեսի գոսին աղեսալի մղձավանջից դուրս չի բերի: Միջոցներին, կառույցներին խելքը գլխին տնօրինող, տեր կանգնողներ են պետք: Հակառակ պարագայում՝ ոնց քամին բերի, այնպես էլ կտանի՝ հուսախաբ անելով ե՛ւ միջոցներ հայթայթողներին, ե՛ւ հույսով ապրող գյումրեցիներին:

ՄԻ ԽՈՒՄԲ ԸՆԿԵՐՆԵՐ

Հ. Գ. **«Ազգի»** կողմից. Սովետական շրջանին բնորոշ այս ստորագրությունն անանուն նամակի վկայություն չէ: Հեղինակները գոնե խմբագրությանը հայտնի են: Անունները չենք հիշատակել հենց նրանց ցանկությամբ՝ համոզված, որ ճշտախոսության համար տեղի իշխանիկների կողմից կենթարկվեն հետապնդումների ու հալածանքների:

ԱԶԳ

Միջազգային

Պաշտոնական Բաքվին հիասթափեցրել է Պակիստանի երկդիմի քաղաքականությունը

Կամ ինչն է խանգարում գեներալ Մուշառաֆին

Պակիստանի ռազմական առաջնորդ, գեներալ Փերվեզ Մուշառաֆի եւ Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի հայտարարությունները Թեհրանում հունիսի 9-10-ին կայացած Տնտեսական համագործակցության կազմակերպության գագաթաժողովում, վերածվեցին միջազգային աղաղակող սկանդալի, գրում է մոսկովյան «Կոմերսանտ» ազդեցիկ դարբերականը:

Հիշեցնենք, թեհրանյան հանդիպման ժամանակ գեներալ Մուշառաֆը նախագահ Ալիեւին օգնություն եւ օժանդակություն էր խոստացել հօգուտ Ադրբեջանի լուծելու Լեռնային Ղարաբաղի խնդիրը: Սենսացիոն հաղորդագրությունը բավականություն էր պատճառել Ադրբեջանի իշխանություններին. նշվում էր, թե Իսլամաբադը ռազմական օգնություն է տրամադրելու Բաքվին: Ի երախտագիտություն, Ադրբեջանը խոստանում էր աջակցություն Իսլամաբադին քաշմիրյան խնդրում:

Առաջինն արձագանքեց Հնդկաստանը. Դելհին բողոքի նոտա ուղղեց Ադրբեջանի կառավարությանը: Քաշմիրի հարցում Պակիստանի եւ Հնդկաստանի միջեւ հակամարտությունը պատճառական Դելհի արտաքին քաղաքականության ամենասուր եւ ցավոտ խնդիրն է, եւ օտարերկրյա ցանկացած միջամտության՝ ռազմական թե քաղաքական, Հնդկաստանը ցավով եւ վրդովմունքով է արձագանքում: Որ Քաշմիրը Հնդկաստանի համար չափազանց զգայուն խնդիր է, քաջ գիտակցում է նաեւ համաշխարհային ժանդարմ ԱՄՆ-ը: Մի քանի ամիս առաջ պատճառական այցով Հնդկաստան ժամանած նախագահ Բիլ Քլինթոնը, որի ղեկավարած երկիրը Պակիստանի դաշնակիցն է այս տարածաշրջանում, հասկանալ տվեց, որ Քաշմիրի հարցում չի պատճառանի Իսլամաբադի պահանջատիրությունը եւ պատճառում է Հնդկաստանի տարածքային ամբողջականությունը:

«Ազգ» արդեն տեղեկացրել է, որ Բաքվում Պակիստանի դեսպանատունը հերքել է Ադրբեջանին ռազմական օգնություն ցույց տալու Հեյդար Ալիեւի հետ Թեհրանում հանդիպման ժամանակ Պակիստանի նախագահի հայտնած պատրաստակամության վերաբերյալ մի

Փերվեզ Մուշառաֆ

տարբերակ: Ինչպես Ադրբեջանի նախագահի աշխատակազմը Մուշառաֆի բառերը չափազանց լուրջ է ընդունել: Աշխատակազմի միջազգային բաժնի պատասխանատու Նովրուզ Մամեդովը (որի վրա են դրված Վաֆա Գուլուզադեի պարտականությունները, ասել է թե՝ արտահայտել պատճառական Բաքվի տեսակետները միջազգային եւ տարածաշրջանային հարցերի շուրջ) «Կոմերսանտին» տված հարցազրույցում նշել է, որ Իսլամաբադի խոստումները՝ օժանդակել Բաքվին լուծելու ԼՂ խնդիրը, մեծ բավականություն են պատճառել ադրբեջանական ղեկավարությանը: Պատասխանելով «Հնարավո՞ր եմ համարում, որ Ադրբեջանն ու Պակիստանը միասին պատերազմեն Լեռնային Ղարաբաղի դեմ» հարցին, Մահմեդովը նշել է. «Դեռեւս Ադրբեջանը մտադիր չէ Ղարաբաղի խնդիրը լուծել ռազմական ճանապարհով»:

Նովրուզ Մահմեդովը հրաժարվել է այլ հարցերի պատասխանել, սահմանելով Ադրբեջանի նախագահի աշխատակազմը Մուշառաֆի բառերը չափազանց լուրջ է ընդունել: Աշխատակազմի միջազգային բաժնի պատասխանատու Նովրուզ Մամեդովը (որի վրա են դրված Վաֆա Գուլուզադեի պարտականությունները, ասել է թե՝ արտահայտել պատճառական Բաքվի տեսակետները միջազգային եւ տարածաշրջանային հարցերի շուրջ) «Կոմերսանտին» տված հարցազրույցում նշել է, որ Իսլամաբադի խոստումները՝ օժանդակել Բաքվին լուծելու ԼՂ խնդիրը, մեծ բավականություն են պատճառել ադրբեջանական ղեկավարությանը: Պատասխանելով «Հնարավո՞ր եմ համարում, որ Ադրբեջանն ու Պակիստանը միասին պատերազմեն Լեռնային Ղարաբաղի դեմ» հարցին, Մահմեդովը նշել է. «Դեռեւս Ադրբեջանը մտադիր չէ Ղարաբաղի խնդիրը լուծել ռազմական ճանապարհով»:

Նովրուզ Մահմեդովը հրաժարվել է այլ հարցերի պատասխանել, սակայն խիստ զարմանք է հայտնել Բաքվում Պակիստանի դեսպանատան տարածած հաղորդագրության վերաբերյալ:

Միեւնույն ժամանակ «Կոմերսանտի» թղթակիցը, ոչ պատճառական աղբյուրներից հետաքրքիր տեղեկություն է ստացել: Բանն այն է, որ երիտասարդ տարիներին Մուշառաֆը կրթություն է ստացել Թուրքիայում եւ տիրապետում է թուրքերենին, որը շատ մոտ է ադրբեջաներենին: Եվ երբ ադրբեջանական ANC հեռուստատեսության թղթակիցը թուրքերեն հարց է տվել Մուշառաֆին՝ պակիստանա-ադրբեջանական ռազմական համագործակցության վերաբերյալ, գեներալ Մուշառաֆը մամլո ասուլիսում խափանել է «պրոտոկոլի նորմերը» եւ հարցին պատասխանել թուրքերեն: Թղթակիցը գեներալից փորձել է ճշտել, թե ռազմական համագործակցությունը հատկապես ինչպես կարող է դրսեւորվել: Հենց պատասխանի ժամանակ էլ «ռազմական օժանդակություն» եւ «ղարաբաղյան հակամարտություն» արտահայտությունները հաջորդել են միմյանց: Ոչ կատարյալ թուրքերենի իմացության հետեւանքով Մուշառաֆի մտքերը աղավաղվել են:

«Կոմերսանտը» նման մեկնաբանությանը հումորով է վերաբերվում, ավելացնելով, թե այս ձեւով Ադրբեջանը եւ Պակիստանը փորձում են խուսանավել միջազգային սկանդալից:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԻՐԻԱ

Ամրապնդվում են Բաշար Ասադի դիրքերը

Հունիսի 22-ին Սիրիայի խորհրդարանի նախագահ Աբդուլ-Կադեր Կադուրան հայտարարել է, որ ընթացիկ ամսվա 26-ին օրենսդիր մարմինը քվեարկության է դնելու Սիրիայի հանգուցյալ նախագահ Հաֆեզ Ասադի որդու՝ Բաշար Ասադի թեկնածությունն իբրեւ երկրի նախագահի: Կադուրան լրագրողներին հայտնել է նաեւ, որ նույն օրը որոշվելու է հանրաքվեի ժամկետը նույնպես, ինչի արդյունքում դոկտոր Բաշարն ընտրվելու է Սիրիայի նախագահ: Կադուրան համոզմունք է հայտնել, որ նշյալ թեկնածությունը միաձայն է ընդունվելու, ավելացնելով, սակայն, որ 126 ձայնն էլ բավական է հաստատելու համար, քանզի սիրիական խորհրդարանը բաղկացած է 250 պատգամավորից: Հիշեցնենք, որ հոր վախճանից հետո Բաշար Ասադը նշանակվել է բանակի եւ վինված ուժերի գլխավոր հրամանատար եւ ընտրվել է իշխող «Բաաս» կուսակցության ընդհանուր քարտուղար: Բացի այդ, հարյուր հազարավոր սիրիացիների աջակցության ցույցերը, որոնք տեղի ունեցան նախագահ Հ. Ասադի մահից հետո, վկայեցին, որ դոկտոր Բաշարը ժողովրդականություն է վայելում Սիրիայում: Ա. Մ.

Իսրայել. Բարաքի կառավարությունը «փրկվեց»

Հունիսի 22-ին իսրայելական կրոնական «Շաս» կուսակցության 4 նախարարները ետ վերցրին հունիսի 20-ին ներկայացրած իրենց հրաժարականները: Կարելի է ասել, որ առժամանակ փլուզումից փրկվեց վարչապետ Եհուդ Բարաքի կոալիցիոն կառավարությունը, մանավանդ որ հունիսի 21-ին հրաժարական էին տվել եւս 3 նախարարներ ծախակողմյան «Մերեց» կուսակցությունից: Բայց եւ այնպես փրկությունը պայմանական է եւ անկայուն: Բանն այն է, որ Բարաքի եւ «Շասի» ձեռքբերած պայմանավորվածությամբ, վերջինս իրեն է վերապահել պաղեստինցիների հետ խաղաղության հնարավոր համաձայնագիրը սատարել-չսատարելու իրավունքը: «Շասի» այս պայմանը կարող է կաշկանդել Բարաքի հետագա քայլերը՝ պաղեստինցիների հետ համաձայնության գալու առումով: Սակայն որոշ դիտորդներ գտնում են, որ վարչապետն ի վիճակի է լինելու «Շասի» այդ պայմանն օգտագործել որպես ճնշման խաղաթուղթ պաղեստինցիների դեմ՝ նրանցից հավելյալ զիջումներ կորզելու նպատակով:

Այս կողմից, Բարաքը հույս է հայտնել, որ «Մերեցի» 3 նախարարները նույնպես շուտով կվերադառնան կառավարություն: Այնուամենայնիվ, այս կուսակցությունը հայտնել է, որ չի շտապում վերադառնալ, սակայն կոալիցիոն կառավարությունը դրսից եւ խորհրդարանում, ուր ունի 10 պատգամավոր, աջակցելու է վարչապետին՝ խաղաղության հասնելու: Ա. Մ.

ԱՄՆ էներգետիկայի նախարարի պատասխանատվության հարցը՝ Սենատի օրակարգում

Մեղավո՞ր է Ռիչարդսոնը, որ Կասպիցում նավթի եւ գազի պաշարները սակավ են

Այս տարվա մայիսի 7-ին ԱՄՆ-ի Լոս Ալամոս քաղաքի միջուկային լաբորատորիաներից անհետացել են երկու համակարգչային սկավառակներ, որոնցում եղել է խիստ գաղտնի տեղեկատվություն: Հետախուզությունների դաշնային բյուրոն վեց շաբաթ շարունակ անհաջող փորձում էր գտնել սկավառակները: ԱՄՆ-ում արդեն խոսակցություններ էին տարածվել հերթական լրտեսական սկանդալի մասին, երբ անցնող շաբաթավերջին սկավառակները հայտնաբերվեցին նույն Լոս Ալամոսի լաբորատորիայում, որը մի քանի անգամ զննվել էր հատուկ ծառայությունների կողմից: Այժմ հետաքննությունը վարողները պետք է բացատրեն, թե ինչպես են սկավառակները ետ բերվել: Կասկածյալների թիվը 26 է:

Լոս Ալամոսի սկանդալի պատճառով խիստ քննադատության է ենթարկվում ԱՄՆ էներգետիկայի նախարար Բիլ Ռիչարդսոնը: Հանրապետական կուսակցության մի քանի ազդեցիկ սենատորներ եւ կոնգրեսականներ պահանջում են Ռիչարդսոնի հրաժարականը: Ինքը՝ Ռիչարդսոնը փորձում է պաշտպանվել, պնդելով, թե չկան որեւէ ապացույցներ, որ սկավառակները դուրս են բերվել գաղտնի X բաժնի տարածից: Նշանակում է՝ լրտեսության մասին խոսելն ավելորդ է, պարզապես անփութության հետեւանք է:

Դիտորդների կարծիքով՝ Լոս Ալամոսի սկանդալը միայն առիթ է հանրապետականների համար՝ պատասխանատվության կանչելու Ռիչարդսոնին: Պատճառները շատ ավելի խորն են: Առաջին հերթին նշվում է, որ Թուրքմենստան-Թուրքիա գազատարի (Կասպիցի հատակով) եւ Բաքու-Ջեյհան նավթատարի նախագծային աշխատանքներում Ռիչարդսոնը եւ իր գերատեսչությունը ձախողվել են:

Բաքու-Ջեյհան նավթատարի աշխատանքները սկսել են տեղում դուրս գալ անցյալ տարվա վերջերից, երբ պարզ է դարձել, որ նավթատարի կառուցումն արժե ոչ թե 2,8 միլիարդ դոլար, այլ առնվազն՝ 4 միլիարդ: Անդրկասպյան գազատարի կառուցումը հետաձգվել է անորոշ ժամանակով, քանի որ ՌԴ նախագահ Պուտինը Ազգաբադում վերջերս պայմանավորվել է թուրքմենական գազ գնել ավելի մեծ չափերով: Հենց այս պատճառով էլ Թուրքմենստանին այլեւս չի հետաքրքրում ԱՄՆ-ի կողմից քաջալերվող Թուրքմենստան-Թուրքիա գազատարի կառուցումը:

Տեղեկացնենք նաեւ, որ Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերը հուլիսի 11-12-ին Բաքվում նախագահ Ալիեւի հետ ի թիվս այլ հարցերի քննարկելու է Բաքու-Ջեյհան նավթատարի խնդիրը:

Ռ. Հ.

ՕՏԱՐ ՍԱՍՈՒԼ

Խոշընդոտներ Բաքվի խողովակաշարի ճանապարհին

Լրագրող Դեյվիդ Ստեռնը անգլիական «Ֆայնենշլ թայմս» թերթի հունիսի 12-ի համարում Բաքվից գրում է, որ նոր խոչընդոտներ են առաջանում Ամերիկայի ջերմ պատասխանությունը վայելող Բաքու-Ջեյհան բազմամիլիարդանոց նավթատարի խողովակաշարի գործարկման հարցում: Գործող մեծագույն կոնսորցիումի՝ Միջազգային շահագործման ադրբեջանական ընկերության (ՄՇԱԸ) մի քանի անդամներ հայտնել են, որ նավթի փոխադրման համար նրանք կարող են չօգտագործել այդ խողովակաշարը, երբ 2004 թ. սկսի արտադրանքի թողարկումը: Նրանք նշել են, որ պայմանագրով պարտավորություն չեն ստանձնել անդամության օգտագործելու Բաքու-Ջեյհան գիծը, եւ հասկանալ են տվել, որ դրա փոխարեն կարող են օգտագործել այլ՝ Վրաստանով, Ռուսաստանով կամ Իրանով անցնող ճանապարհները:

Չհամաձայնելով այս տեսակետի հետ, ադրբեջանցի իշխանավորները պնդում են, որ 1994-ին պայմանագիրը ստորագրելիս բոլոր անդամները խոստացան օգտագործել միայն Բաքու-Ջեյհան խողովակաշարը:

Կոնսորցիումի բաժնետոմսերի 10 տոկոսի տեր ռուսական «ԼՈՒԿՕյլի» փոխնախագահ Վիտալի Լեսնիչին ասել է, որ իր ընկերությունը, օրինակ, կգերադասեր օգտագործել Ռուսաստանի հյուսիսային խողովակաշարը, որը հասնում է մինչեւ Նովոռոսիյսկ: «Դա ամենախնայողական ճանապարհն է եւ առեւտրի տեսակետից ամենագրավիչը», նշել է նա, ավելացնելով, որ պայմանագրով իրենք ազատ են ընտրելու ցանկացած ուղի:

Այս կողմից, որոշ միջազգային բանկեր 6 միլիարդ բարելի երաշխիք են պահանջել նախքան կառուցումը սկսելը: Ներկա տվյալներով արտադրանքը չափազանց փոքր է:

Կոնսորցիումի այս անդամներն առայժմ որոշակի դիրքորոշում չեն արտահայտել արտադրանքի փոխադրման հարցի վերաբերյալ:

Ռ. Օ.

ԱՄՆ-Վրաստան. ռազմական ոլորտի նոր համաձայնագրեր

ԹԲԻԼԻՍԻ, 23 ՀՈՒՆԻՍ, ՍՆԱՐՔ: Հունիսի 22-ին Թբիլիսիում ԱՄՆ պատասխանության նախարարի տեղակալ Էդվարդ Ուորները եւ Վրաստանի պատասխանության նախարար Դավիդ Թեւզաձեն ստորագրել են 2000 թվականին Վրաստանի եւ ԱՄՆ-ի պատասխանական գերատեսչությունների միջեւ ռազմական համագործակցության ծրագիրը եւ շրջակա միջավայրի պատասխանության ոլորտում համագործակցության մասին համաձայնությունը:

Ռազմական համագործակցության ծրագրի համաձայն, ԱՄՆ-ը մտադիր է աջակցել Վրաստանի պատասխանության նախարարությանը՝ վրացի ռազմական մասնագետներին տարբեր միջոցառումներին, հանդիպումներին, սեմինարներին մասնակցել ուղարկելու, ինչպես նաեւ Վրաստանի Չինուժի համար կադրերի նախապատրաստման հարցում: Ընդհանուր առմամբ, Ռազմական համագործակցության ծրագիրը ենթադրում է ԱՄՆ-ի կողմից Վրաստանին օգնության տրամադրում՝ վերջինիս բանակում բարեփոխումներ անցկացնելու նպատակով:

Էդվարդ Ուորները նշել է, որ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում համագործակցության մասին համաձայնությունը ենթադրում է Վրաստանին օգնության տրամադրում ռադիոակտիվ նյութերի եւ հրթիռային վառելիքի, որը մնացել է նախկին խորհրդային բանակի տեղակայման վայրերում, օգտագործման հարցում:

Էդվարդ Ուորները հայտարարել է, որ ԱՄՆ-ը կշարունակի աջակցել վրացական բանակում իրականացվող բարեփոխումների գործընթացին:

ԱԶԳ

Մշակույթ

Նորայր Աղալյանի վերջին շրջանի պատմվածքներն ու վիպակներն ազդարարում են նրա գրական ուղղության կտրուկ փոփոխությունը, որն առաջին հայացքից կարող է արտառոց թվալ, նույնիսկ անպարկեշտ: Սակայն խորասույզ ընթերցումը երեւան է հանում հեղաբեկման հիմքը, այն հիմնովին փոփոխված մեր կյանքի գեղիրատեսական արձագանքն է: Ահա գրողը վերջին ընթերցողին է ուղղել «Ճայը» վիպակը («Նոր դար», թիվ 2, 1999 եւ թիվ 1, 2000), ինչպես նաեւ «Թաղման թափոր» պատմվածքների ժողովածուն:

Հոգու եւ մարմնի փոխկապակցության բարդ հարցերն է ընծում «Ճայը» վեհուշ-վիպակը: Հեղինակը երկն սկսում է երբեմնի արձակ գործերի ընական ունչ ունեցող ռեալիզմով եւ հետո ծերացող ու լքված, մի ժամանակ հրաշք գեղեցկություն ունեցող բժկուհու կյանքը դնում է ընթերցողի առաջ անհավասալի մերկացված, երբեմն բախտոսական ու անատոմիական մանրամասներով: Մի՞թե մենակությունն այդքան կարող է ճնշել մարդու հոգու թռիչքը եւ այդքան տեղ տալ մարմնականին: Հեղինակն ինքը պատասխանում է իր իսկ առաջադրած հարցին վիպակի վերջում. «...Երբ հասարակական կյանքը ծայրահեղորեն քաղաքականացված է, ամենուրեք ցեխ ու աղբ, կեղծիք, սպանություններ, երեսպաշտություն, ֆենանք, դու որոնում ես քո եւ մարդու անարատ բնությունը եւ սիրելով կարոտում նրան»:

Ուրեմն այս եզրակացության հիմքում են ընկած վիպակի հերոսուհու Ռուզանի վերհուշները, որոնցում կան հիշեցնող տեսարաններ Դեյվիդ Հերբերտ Լոուրենսի «Լեդի Չատերլիի սիրեկանը» վեպից, Ինգմար Բերգմանի աղոթեցուցիչ անկեղծ ինքնակենսագրականից, Ջեյմս Ջոյսի «Ուլիսի» «Պենելոպե» հատվածից եւ ուրիշ նման երկերից:

«Վագրը իբրեւ նախաբան» հատվածը պատմվածքների նոր ժողովածուի համար կատարում է խորհրդանշային առաջաբանի դեր: Գրողը նրանում կարծես ասում է՝ ես կյանքին նայում եմ, դիտում, մատուցում ոչ ընդունված ձեւով եւ ոչ սովորական գրական չափանիշներով: Այս ժողովածուն, անշուշտ, հեղինակի դարավերջյան գրական-գեղարվեստական մտահղացումն է: Նրանում կան ամենատարբեր պատմվածքներ, սակայն բոլորն էլ ունեն ներքին մի կաղ՝ դա նրանց մատուցման ձեւն է:

«Բաբելոնի աշտարակը» ներկայացնում է անվան ու մարդու հոգեբանական կաղը, որը ենթագիտակցական բեռնվածություն կարող է ունենալ եւ կենսական խնդիրներում բախտորոշիչ լինել: Անհայտ է կյանքի այն կողմը՝ անդրաշխարհը, բայց նույն մարդու մեջ կա նաեւ չցուցադրվող կողմը, որը երբեմն կարող է լինել տանջալից, թելադրել մի վարքագիծ, որը թվում է անհասկանալի: Կարծում ենք, թե կյանքի ու մահվան բաժանիչ գծի մշտական առկայությունն է հեղինակին թելադրել պատմվածքի խորագիրը՝ «Բաբելոնի աշտարակ», եւ ներկա ու Նաբուգոդոնոսոր թագավորի ժամանակների միջեւ տեսնել կամուրջ. մարդ արարածը բազմաթիվ անտեսանելի տագնապներով թերեւս նույնն է եղել:

Թեպետ նոր չէ բնանկարի հոգեբանական ներգործությունը մարդու հուզաշխարհի վրա, սակայն Աղալյանի «Ամառանոցում» պատմվածքի սկիզբը բացառիկ ներշնչող է՝ բնության ու մարդու ջերմ ու անբաժանելի կապի շեշտադրմամբ: Գրողը կնոջ եւ տղամարդու հարաբերություններում դիտակ եւ բարձրաձայն ասում է այն, ինչը գուցե գեղարվեստի կանոններով չտեսք է ասվի. սա իրատեսությո՞ւն է, թե՞ մարդու հեռավոր, շատ հեռավոր անցյալի կրկնվող արձագանքը, որը խաղաքարքության պահանջով իրավացիորեն խլացված է: Մեր իրականության ոչ հետ ընթացքն է երեւում գրողի այս նոր գործերում՝ երբեմն Բոսխի եւ երբեմն էլ Դալիի նկարների պատկերներով: Աղալյանը մատնացույց է անում խաղաքարքության առավելություններն ու թերացումները, տեղեկատվության հեղեղի ճնշիչ ուժը, բնության հետ լինելու, ինքնասուզման եւ կրքերի մեջ

Նահանջ, թե վերակերպավորում

Նորայր Աղալյանի նոր գիրքը

ված, մի ժամանակ հրաշք գեղեցկություն ունեցող բժկուհու կյանքը դնում է ընթերցողի առաջ անհավասալի մերկացված, երբեմն բախտոսական ու անատոմիական մանրամասներով: Մի՞թե մենակությունն այդքան կարող է ճնշել մարդու հոգու թռիչքը եւ այդքան տեղ տալ մարմնականին: Հեղինակն ինքը պատասխանում է իր իսկ առաջադրած հարցին վիպակի վերջում. «...Երբ հասարակական կյանքը ծայրահեղորեն քաղաքականացված է, ամենուրեք ցեխ ու աղբ, կեղծիք, սպանություններ, երեսպաշտություն, ֆենանք, դու որոնում ես քո եւ մարդու անարատ բնությունը եւ սիրելով կարոտում նրան»:

Ուրեմն այս եզրակացության հիմքում են ընկած վիպակի հերոսուհու Ռուզանի վերհուշները, որոնցում կան հիշեցնող տեսարաններ Դեյվիդ Հերբերտ Լոուրենսի «Լեդի Չատերլիի սիրեկանը» վեպից, Ինգմար Բերգմանի աղոթեցուցիչ անկեղծ ինքնակենսագրականից, Ջեյմս Ջոյսի «Ուլիսի» «Պենելոպե» հատվածից եւ ուրիշ նման երկերից:

«Վագրը իբրեւ նախաբան» հատվածը պատմվածքների նոր ժողովածուի համար կատարում է խորհրդանշային առաջաբանի դեր: Գրողը նրանում կարծես ասում է՝ ես կյանքին նայում եմ, դիտում, մատուցում ոչ ընդունված ձեւով եւ ոչ սովորական գրական չափանիշներով: Այս ժողովածուն, անշուշտ, հեղինակի դարավերջյան գրական-գեղարվեստական մտահղացումն է: Նրանում կան ամենատարբեր պատմվածքներ, սակայն բոլորն էլ ունեն ներքին մի կաղ՝ դա նրանց մատուցման ձեւն է:

«Բաբելոնի աշտարակը» ներկայացնում է անվան ու մարդու հոգեբանական կաղը, որը ենթագիտակցական բեռնվածություն կարող է ունենալ եւ կենսական խնդիրներում բախտորոշիչ լինել: Անհայտ է կյանքի այն կողմը՝ անդրաշխարհը, բայց նույն մարդու մեջ կա նաեւ չցուցադրվող կողմը, որը երբեմն կարող է լինել տանջալից, թելադրել մի վարքագիծ, որը թվում է անհասկանալի: Կարծում ենք, թե կյանքի ու մահվան բաժանիչ գծի մշտական առկայությունն է հեղինակին թելադրել պատմվածքի խորագիրը՝ «Բաբելոնի աշտարակ», եւ ներկա ու Նաբուգոդոնոսոր թագավորի ժամանակների միջեւ տեսնել կամուրջ. մարդ արարածը բազմաթիվ անտեսանելի տագնապներով թերեւս նույնն է եղել:

Թեպետ նոր չէ բնանկարի հոգեբանական ներգործությունը մարդու հուզաշխարհի վրա, սակայն Աղալյանի «Ամառանոցում» պատմվածքի սկիզբը բացառիկ ներշնչող է՝ բնության ու մարդու ջերմ ու անբաժանելի կապի շեշտադրմամբ: Գրողը կնոջ եւ տղամարդու հարաբերություններում դիտակ եւ բարձրաձայն ասում է այն, ինչը գուցե գեղարվեստի կանոններով չտեսք է ասվի. սա իրատեսությո՞ւն է, թե՞ մարդու հեռավոր, շատ հեռավոր անցյալի կրկնվող արձագանքը, որը խաղաքարքության պահանջով իրավացիորեն խլացված է: Մեր իրականության ոչ հետ ընթացքն է երեւում գրողի այս նոր գործերում՝ երբեմն Բոսխի եւ երբեմն էլ Դալիի նկարների պատկերներով: Աղալյանը մատնացույց է անում խաղաքարքության առավելություններն ու թերացումները, տեղեկատվության հեղեղի ճնշիչ ուժը, բնության հետ լինելու, ինքնասուզման եւ կրքերի մեջ ուղիղ շարունակությունն են նրա երիտասարդ տարիների ընտրած գրական դավանանքի, իսկ որոշ գործեր շեշտված գերիրատեսական են: Կերպարների մի մասն, անշուշտ, հավատական են, հավատական են նաեւ կերպարների կենցաղային բարդ փոխհարաբերություններն իրար հանգուցող պատկերները:

Աղալյանը գրում է իր ժամանակի համար, իր ժամանակի մասին: Ժամանակը բարդ է, խառը, երբեմն նաեւ անկման առումով միագիծ, չափանիշները, բարոյական նորմերը փոխված են, հին բարոյական չափանիշները բոլորովին չեն գործում, ազնիվ մարդիկ դուրս են նետվում կյանքը կառավարող ընթացքից, մեծ մասը ստիպված է: Միայն իրենց մեջ դաժանությունն ու վախեցնելու բնազդը ամբարած հզորներն են դառնում կյանքի տերը:

Մեր կարծիքով, հեղինակն իր երբեմն գրոտեսկային պատկերներով ուզում է զգուշացնել, թե որքան ավելի զգաստ պետք է լինել անասնական մակարդակին չիջնելու համար:

Աղալյանի պատմվածքներից երեւում է, որ մահվան ու կյանքի գիծը կտրվում է, սակայն մեռածները շարունակում են ապրել մարդկանց մեջ իրենց չար ու բարի գործերով, նրանք մնում են կենդանիների շարքում, նրանց արարքների միջոցով կենդանիների աչքերի առաջ սկսում է բացվել վերջիններիս հոգի գաղտնիքների կծիկը: Չուր մի փնտրեք կոնկրետացում, ընկալեք որպես տիպականացված վերացարկում: Մի՞թե խորհրդային ժամանակներում 37 թիվ կոչված հասկացության տակ եղած սարսափներն այսօր իրենց ուրվականներով չեն ուղեկցում մեզ, մի՞թե հաշվեհարդար իրականացրած գործիչների ու նրանց զոհերի կերպարները գերեզմանների եւ ապրողների կաղը չեն:

Մեր խորին համոզմամբ Նորայր Աղալյանն իր այս վերջին երկերով պահանջում է կյանքից հակառակը՝ մարդկային սեր, նվիրվածություն, հավատ, կեղծիքի մերժում, դրամի բազավորության թուլացում: Բացի այդ, նրա բոլոր հերոսներն էլ՝ բարի թե չար, ծայրահեղ բեւեռացված չեն, չարերն էլ ունեն երբեմն-երբեմն ազնիվ բռնկումներ, իսկ բարիները՝ նաեւ սայթաքումներ:

Նորայր Աղալյանի գրախոսվող երկերը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է որոշակի գրական կրթվածություն, ոչ շատերին հատուկ դիտողականություն եւ ի վերջո ժամանակների ու քաղաքական հեղաբեկումների բարդ հանգույցների հնարավոր ընկալունակություն:

ԱԵԼԻՏԱ ԴՈՒԼՈՒԽԵՎԱՆ

ԱՐԺԱՆԻՆ ՄԱՏՈՒՑԵՆՔ

Շիրազի հուշատուն-թանգարանը վերջապես կբացի դռները

88-ի ավերիչ երկրաշարժից հետո Հովհաննես Շիրազի Գյումրիի տուն-թանգարանի շենքը զբաղեցրել էին անօթեւան ընտանիքները եւ չէր ծառայում իր նպատակին: Քաղաքի փոփոխվող իշխանություններն անցած տարի, ոչ մեկ անգամ, փորձ են արել գտնել շենքն ազատելու եւ թանգարանին վերադարձնելու որեւէ լուծում, սակայն չեն հաջողել: Բնակիչները միշտ որպես դրա միակ նախապայման առաջ են քաշել իրենց նոր բնակարանների տրամադրումը: Օրերս հարցը վերջապես լուծվեց՝ շնորհիվ աղետի գոտում բնակարանների գնման վկայագրերի փորձնական ծրագրի: ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության եւ Հայաստանի կառավարության համատեղ ֆինանսավորմամբ իրականացվող այս ծրագրով փորձնական կարգով Գյումրիի անօթեւան մոտ 150 ընտանիքների տրամադրվում են բնակարանների գնման վկայագրեր, որոնցով նրանք կարող են իրենց համար բնակարան ձեռք բերել անշարժ գույքի շուկայից:

Նման իրավունք առայժմ վերադարձված է եւ վկայագրեր տրամադրվում են քաղաքի միայն երեւանյան խճուղու հատվածում ժամանակավոր բնակվողներին, սակայն միջազգային զարգացման գործակալությունը, ՀՀ կառավարությունը եւ քաղաքապետարանը Գյումրիի մշակութային արժեք ներկայացնող օջախի համար բացառություն արեցին՝ այն զբաղեցնող 8 ընտանիքների եւս հանձնելով այդպիսի վկայագրեր: Դրանով նաեւ բավարարվեց թանգարանը վերաբացելու բանաստեղծի զավակների եւ մշակութային այդ օջախի տնօրինության խնդրանքն ու Գյումրիի հանրության ցանկությունը:

Այսպիսով, Հովհաննես Շիրազի Գյումրիի տուն-թանգարանի տարածքը շուտով կազատվի վերջնականապես, եւ անհապաղ կսկսվեն նորոգման աշխատանքները:

Ընդհանուր հաշվով դրանք կտեւեն մոտ 2 ամիս: Նորոգման համար անհրաժեշտ է 3 մլն դրամ: Նախահաշվարկային ծախսերը կկատարվեն քաղաքային բյուջեից: Հարցը տնօրինողները կարծում են, որ 12 տարվա «լռությունից» հետո տուն-թանգարանի վերաբացումը մեծ բանաստեղծի ծննդյան այս տարի լրացած 85-ամյակի ամենալավ նվերը կլինի:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
Գյումրի

«...Աստծո երգը լսելով...»

Վիեննական երաժշտության փառատոնը Երեւանում շարունակվում է: Համերգից առաջ Լորիս Ճգնավորյանը, դիմելով օրվա ունկնդիրներին, ասաց. «Մոցարտի երաժշտությունն իսկապես աստվածային է: Երբ Մոցարտ ենք լսում, լսում ենք Աստծո երգը»:

Հունիսի 22-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում հնչեցին Վ. Ա. Մոցարտի նախերգանները եւ կոնցերտային արիաները Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի եւ ավստրիացի մենակատար Ինգրիդ Հաբերմանի կատարմամբ: Ինգրիդ Հաբերմանը ծնվել է Լինցում: Սլավոնական եւ ռոմանական լեզուների ուսումնասիրմանը զուգահեռ վոկալ դասեր է առել Զալցբուրգի Մոցարտեումում: Ուսումը ավարտելուց հետո ընդունվել է Բեռնի օպերային ընկերություն՝ սանձնելով կոլորատուրային սոպրանոյի հիմնական դերերգերը: Երգչուհու մեծ հաջողություններից է Մինեսեի դերերգը Հենդելի «Անգլիական կատու» օպերայում: Բացի Լինցի օպերային թատրոնից, Ինգրիդ Հաբերմանը ելույթ է ունեցել ավստրիական Մոերբիշ օպերեսային փառատոնում՝ 1998-ին՝ Չելլերի «Թռչուն վաճառողը» եւ 1999-ին՝ Շտրաուսի «Գիշերը Վենետիկում» օպերետներում: Համերգներ է ունեցել Գերմանիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Շվեյցարիայում, Ֆինլանդիայում:

Ինգրիդ Հաբերմանը համագործակցում է Բրյուսելի Theatre de la Monnaie-ի հետ, որտեղ երգել է Շոստակովիչի «Մակբեթը Մցենսկ գավառից» օպերայում: Հայտնի լինելով որպես համերգային մենակատար, նրա երգացանկը Բախից, Մոցարտից տարածվում է մինչեւ ռոմանտիկ կոմպոզիտորները եւ ժամանակակից երաժշտություն:

Մոցարտի ստեղծագործությունները, որոնց կատարմամբ Ինգրիդ Հաբերմանը հանդես եկավ հայկական համերգասրահում, երգչուհու համար միշտ եղել են ստեղծագործական գործունեության հիմնաքար:

Փառատոնը շարունակվում է:

ԷԼՄԻՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Մենք հայելու դիմաց

Պատրաստվում է նոր բեմադրություն

Գաբրիել Սունդուկյանի անվան թատրոնը պատրաստվում է բեմադրել Անահիտ Աղասարյանի «Անառակ հոր վերադարձը»: Ժամանակակից թեմա, մեր ժամանակների կյանք: Բայց բարդ մի տիպ է իր ուղղվածությամբ, իր ծնմարտություններով: 32 տարի ընտանիքից բաժանված, ԱՄՆ-ում հաստատված հայ մարդը եկել է, որովհետեւ... կինը մահացել է: Հոր ու աղջկա հարաբերություններ են բացատրվում պիեսում: Եվ՝ ոչ միայն: Բազմաշերտ այս գործում պաթետիկ հայրենասիրության փոխարեն իրական կյանք է, իրական մարդիկ: Պիեսի հեղինակը եւ բեմադրության ռեժիսոր ու գլխավոր դերակատար Կարեն Ջանիբեկյանը փորձում են շատ ավելի լուրջ, անգամ ծայրահեղության հասնող հարցադրումներ առաջ քաշել: Ինչո՞ւ են մարդիկ այսօր լքում հայրենիքը, տուն ու տեղից կտրվում, ինչո՞ւ են թափառական դառնում: Պատճառներն, անշուշտ, բոլորս գիտենք: Եվ ի՞նչ է արվում սարսափելի չափերի հասնող արտագաղթի դեմն առնելու, հայ մարդուն, հայոց հողը, Հայաստան-աշխարհը փրկելու համար: Ոչինչ: Պարզ ասենք՝ ոչինչ: Մեկ առ մեկ, տուն առ տուն հալվում ենք, ամեն մեկն իր համար ողբերգությունների նոր բեռ է շալակում, ու այս համատարած ողբերգությունները գումարվում են իրար: Շատ ավելի խորն են դրա արմատները, անանձնական, համատարած: Անահիտ Աղասարյանը, Կարեն Ջանիբեկյանը, աղջկա դերակատար Լալա Մնացականյանը, զինվորական ծառայությունից խուսափող երիտասարդ տղան (Արա Հարությունյան) փորձում են մեր մասին պատմել մեզ, մեզ կանգնեցնել հոգու հայելու առաջ: Ի վերջո պիտի տեսնենք մեզ, չէ՞, ի վերջո պիտի հասկանա՞նք, թե ինչ է կատարվել:

Ս. Գ.

Մարզական

ՀԱՕԿ

Տեսագա ամուր կապերի ակնկալիքով

Միջազգային օլիմպիական ակադեմիայի ղեկավարության հրավերով Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն (ՀԱՕԿ) մեկնել էր Հունաստան: Պատվիրակությունը ղեկավարում էր ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ռեկտոր, Հայաստանի օլիմպիական ակադեմիայի նախագահ, պրոֆեսոր Վահրամ Առաքելյանը: Նրա հետ հարցազրույցը այդ ուղեւորության շուրջ է:

– Պրն Առաքելյան, ի՞նչ նպատակով էիք մեկնել Հունաստան:

– Միջազգային օլիմպիական ակադեմիայի նախագահության հրավերով հունիսի սկզբին եղանք Հունաստանում, Օլիմպիա ավանում՝ մասնակցելու միջազգային օլիմպիական ակադեմիայի տնօրենների եւ պրոֆեսորների 5-րդ միջազգային նստաշրջանին: Միջոցառման նպատակն էր լսել ու ճնարկել ՄՕԿ-ի անդամ պետությունների օլիմպիական ակադեմիաների հաջվետու զեկուցումները՝ օլիմպիական գաղափարախոսության եւ դաստիարակության ասպարեզում կատարվող աշխատանքների մասին: Ինձ հետ էին մեր ազգային օլիմպիական ակադեմիայի դեկան, դոցենտ Հարություն Բաբայանը եւ տնտեսագիտական պետական ինստիտուտի ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Լեւոն Սամվելյանը: Մինչեւ մեկնելը մենք տեղեկացրել էինք մեր ներկայացնելիք աշխատանքների մասին եւ թե ինչ թեմաներով ենք հանդես գալու նստաշրջանում:

– Եվ ինչո՞վ ներկայացաք:

– Մեզ հետ տարել էինք Հայաստանում նկարահանված ֆիլմ՝ նվիրված օլիմպիական գաղափարախոսությանը, շարժմանն ու տարածմանը: Ֆիլմում արտացոլված էին Հայաստանի պատմական հուշարձանները, տեսարժան վայրերը, համահայկական խաղերի բացման ու փակման, մեր ինստիտուտում օլիմպիական բանգարանի բացման արարողությունները, օլիմպիական դասընթացը մեր ինստիտուտում եւ հանրակրթական դպրոցներում եւ այլն: Ֆիլմը ցուցադրվեց նստաշրջանի մասնակիցների համար եւ ընդունվեց մեծ խանդավառությամբ: Ներկայացված 14 պետությունների ֆիլմերից միայն մերն արժանացավ բոլոր մասնակիցների բուռն ծափահարություններին ու բարձր գնահատականին: Դա մեզ համար մեծ հաղթանակ էր:

– Ինչպե՞ս ընթացան օրերը Օլիմպիա ավանում:

– Մեզ այնտեղ բաժանեցին խմբերի: Մեր խմբում ընդգրկված էին Արգենտինան, Բրազիլիան, Ուկրաինան, աֆրիկյան երկրներ, թվով 12 պետություն: Ամեն մի երկրի ներկայացուցիչ հաղորդում էր օլիմպիական գաղափարախոսության ու շարժման ասպարեզում իրենց մոտ կատարված աշխատանքների մասին: Եղան կարծիքների փոխանակություն ու առաջարկություններ: Մենք ներկայացրինք մեր ակադեմիայի կառուցվածքն ու խորհրդանշանը, որոնք բազմացվեցին ու բաժանվեցին պատվիրակություններին, որպեսզի այդ նույն աշխատանքը կատարեն իրենց մոտ: Բավականին ակտիվ ու արդյունավետ էր պարոնայք Բաբայանի ու Սամվելյանի՝ այնտեղ կատարած աշխատանքը: Մեր ֆիլմը ցուցադրելիս պրն Բաբայանը անգլերեն լեզվով բացատրություններ էր տալիս:

– Ի՞նչ ուսանելի բան տվեց այցելությունը:

– Մենք համոզվեցինք եւ ուրախ ենք, որ մեր աշխատանքը ճիշտ ուղու վրա է, բայց եւ չպետք է բավարավենք կատարվածով, դեռ շատ անելիքներ ունենք, հատկապես ինստիտուտում: Եվ, ամենակարեւորը, ունեցանք օգտակար հանդիպումներ: Հատկապես շատ կարեւոր էր հանդիպումը Մոսկվայի ֆիզիկական կուլտուրայի ակադեմիայի ռեկտոր եւ ՌԴ ԱՕԿ-ի նախագահ Կուզինի հետ: Մենք երկար զրուցեցինք, բարեկամացանք, ճնարկեցինք ակադեմիային ու մեր ինստիտուտին վերաբերող շատ հրատապ խնդիրներ՝ կապված մեզ գրականությամբ ապահովելու, կադրեր փոխանակելու եւ այլնի հետ: Պրն Կուզինը պատրաստակամություն հայտնեց՝ ամեն ինչով անհատույց օգնել մեր ինստիտուտին: Ես, որ ավարտել եմ այդ ակադեմիան, ուզում եմ վերականգնել եւ ավելի ամրապնդել նախկին կապերը:

– Պրն Առաքելյան, իսկ ի՞նչ կասեք ձեր ստացած տպավորությունների մասին:

– Ամեն ինչ հիանալի էր՝ թե՛ նստաշրջանի բարձր մակարդակով անցկացումը, թե՛ օլիմպիական ավանն իր ամբողջության մեջ: Դարերի ծածկույթից լույս աշխարհ հանված պատմական հուշարձանները այլ են շոյում բաց երկնքի տակ թանգարանում: Դիտելով դրանք՝ իմ առջեւ հառնում էին մեր Գառնին, մեր Զվարթնոցը: Ես հպարտության զգացում ապրեցի, որ այնտեղ, հին դարերի օլիմպիական չեմպիոնների հարեւանությամբ ցուցադրված էր նաեւ հայազգի չեմպիոն հայոց Վարազաս Արշակունի թագավորի կիսանդրին: Տպավորիչ էին միջազգային ակադեմիայի հարուստ գրադարանը, արդի տեխնիկայով հագեցած կաբինետներն ու լսարանները, ուր ամեն տարի եռամսյա դասընթացներ են անցնում տարբեր երկրների ուսանողներ ու ասպիրանտներ: Պայմանավորվածություն ձեռք բերեցինք, որպեսզի մենք եւս ասպիրանտ ուղարկենք այնտեղ ուսանելու: Ամենավառ տպավորությունն այն էր, որ, մեր ֆիլմը դիտելուց ու մեր աշխատանքներին ծանոթանալուց հետո, բոլորը մեզ գնահատեցին, եւ շատերը ցանկություն հայտնեցին, որպեսզի մեր մանկավարժ-մարզիչ կադրերը աշխատեն իրենց երկրներում:

ԱՐՏԱՎԱԶԴ ՍԱՔՈՆՅԱՆ

Հայաստանի պատվիրակությունը Օլիմպիայում Ռուսաստանի եւ Ուկրաինայի իրենց գործընկերների հետ:

ՖՈՒՏԲՈԼ

Պայքարը վերսկսվում է

ՌՈՒԶԱՆՆԱ-ԱՐՄԵՆՊՐԵՍ

EURO 2000

Երկօրյա ընդմիջումից հետո Եվրոպայի առաջնությունում վերսկսվում է պայքարը: Ութ ուժեղագույն թիմեր շարունակում են մրցել մեդալների համար: Այսօր երկու խաղ տեղի կունենա: Կհանդիպեն Պորտուգալիա-Թուրքիա եւ Իտալիա-Ռումինիա զույգերը: Իսկ վաղը խաղադաշտ կմտնեն Իսպանիան եւ Ֆրանսիան, Հոլանդիան եւ Հարավսլավիան: Եվ կրկին շատ են կարծիքները, կանխագուշակությունները: Բայց փորձը ցույց է տալիս, որ դրանք շատ հաճախ նշանակություն չունեն:

Խորհրդանշական հավաքականը

Խմբային մրցաշարերի ավարտի արդյունքներից ելնելով՝ ամենատարբեր գործակալություններ անվանում են Եվրո-2000-ի խորհրդանշական հավաքականը: Ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում դրանցից մեկը՝ Reuters-ի տարբերակը:

Դարպասապահ՝ Ֆրանչեսկո Տոլդո (Իտալիա), **պաշտպաններ՝** Լիլիան Տյուրամ (Ֆրանսիա), Ֆրանկ դե Բուր (Հոլանդիա), Պաոլո Մալդինի (Իտալիա), **կիսապաշտպաններ՝** Պավել Նեդվեդ (Չեխիա), Լուիշ Ֆիգու (Պորտուգալիա), Զինեդին Զիդան (Ֆրանսիա), Ռուի Կոշտա (Պորտուգալիա), Էդգար Դավիդս (Հոլանդիա), **հարձակվողներ՝** Թիերի Անրի (Ֆրանսիա), Զլատկո Զահովիչ (Սլովենիա):

«Ոսկե զամբյուղը»՝ «Լոս Անջելեսին»

Բասկետբոլի ազգային ասոցիացիայի (NBA) գլխավոր մրցանակը նվաճեց «Լոս Անջելես Լեյքերզ» թիմը: Եզրափակիչ մրցախաղերի շարքը նա 4-2 հաշվով շահեց «Ինդիանա Պեյսերզ» թիմից: Ամբողջ մրցաշրջանում եւ, հատկապես, փլեյ-օֆ շարքում հիանալի հանդես եկան «Լոս Անջելեսի» առաջատարները՝ Շաքիլ Օ'Նիլը եւ Կոբե Բրայանը:

Սա «Լեյքերզի» նմանօրինակ 12-րդ հաղթանակն է NBA-ի առաջնություններում: Բայց ռեկորդը պատկանում է «Բոստոն Սելթիկսին» (16 հաղթանակ):

Նշենք նաեւ մեկ այլ նվաճում: «Լոս Անջելես Լեյքերզի» գլխավոր մարզիչ Ֆիլ Ջեքսոնը 7-րդ անգամ իր սաներին հասցրեց հաջողության: Բայց Ջեքսոնը նախորդ 6 հաղթանակները տարել էր մեկ այլ թիմի՝ «Չիկագո Բուլզի» հետ:



ՌՈՒԶԱՆՆԱ-ԱՐՄԵՆՊՐԵՍ



Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ԽԱՉԲԱՌ

ՀՐԵՏ ԼՈՒԹԵԼՈՎ ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ԽԱՉԲԱՌԸ ԵՎ ԱՌԱՋԻԿԱ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԱՌԱՋԻՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՎ «ԱԶԳ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐՈՂ ԵՔ ՍՏԱՆԱԼ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՄՐՑԱՆԱԿ:

Ուղղահայաց

2. XVII դ. ֆրանսիական ճարտարապետության մեջ կլասիցիզմի ներկայացուցիչ, Լուվրի արեւելյան ճակատի նախագծողը: 3. էլեմենտ, ...: 5. Համակենտրոնացման ճամբար Գերմանիայում: 6. Օձի տեսակ: 8. 350 թ. այս գյուղի մոտ տեղի է ունեցել ճակատամարտ պարսից արքա Շապուհի եւ հայոց արքա Տիրանի զորքերի միջեւ: 9. Բարդ բառ կազմող մասնիկ, որը ցույց է տալիս լույսի կամ դրա ազդեցությունների հետ ունեցած առնչությունը: 10. Լեհական ազգային պար: 11. Քաղաք Ուզբեկստանում: 12.: 13. Կաբարդինների, չեչենների, օսերի եւ այլ կովկասյան ժողովուրդների էպոսի անվանումը: 15. Գերմանացի կոմպոզիտոր: 17. Արվեստների հովանավոր Աստվածը հայկական դիցաբանության մեջ: 18. Արհիտելագ Հարավային Ամերիկայի հարավային վերջավորության մոտ, որը հայտնագործել է Մագելանը եւ այնտեղ երեւացող կրակները հրի պատճառով այն անվանել ... երկիր: 22. Հայաստանում արտադրվող ջրատաքացուցիչ: 23. Ռուս դերասան եւ ռեժիսոր: 25. Ժամանակի միավոր: 26. Ադրանիի մաքուր քաղը: 28.: 29. Յուրաքանչյուր համաստեղության ամենաողջունելի աստղի անվանումը:

Հորիզոնական

1. Աշխարհահռչակ հայկական բալետ: 4.: 7.: 10.: 12. Հենդելի օրատորիան: 14. Արեւելյան սպորտաձեւ: 16.: 18. «Անգլիական կատու» օպերայի հեղինակը: 19. Քաղաք Թուրքիայում, էգեյան ծովի ափին: 20. Պոչ, կոտոշ, ...: 21. Ինչ որ մեկը, ... մեկը: 22. Քաղաք Ֆրանսիայում: 24. Իգական սեռական օրգան: 27. Նավահանգիստ Ֆիլիպիններում, Մինդանաո կղզում: 30. Ծառատեսակ: 31. «Պիկովայա դամա» օպերայի հեղինակը: 32. Նոտաների համար դաշնամուրին կամ այլ նվագարանին ամրացված հարմարանք:

Կազմեց է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

Ուղղահայաց

1. Կորովին: 2. Գերմանիա: 3. Ռաբլե: 4. Դիլմա: 5. Կոռնիլով: 6. Ջողածուկ: 9. Խնձոր: 10. Գառզու: 16. Սթոուն: 17. Գալեն: 21. Արաբական: 23. Մուրադյան: 24. Սարուխան: 25. Հայնե: 26. Աբգար: 27. Կարոյան: 31. Այրին: 32. Կողակ:

Հորիզոնական

7. «Խողեդան»: 8. Միրոնով: 11. Ֆորմալին: 12. Արմենյան: 13. Լիոնի: 14. Մորզե: 15. Բյուզ: 18. Մարթա: 19. Նարվա: 20. Մասուր: 22. Ֆերմա: 28. Հասան: 29. «Սալբի»: 30. Դրվագ: 33. Շուշանյան: 34. Ակորդեոն: 35. Կարաբին: 36. Բալագան:

ՀԱՍԱՐՈՍ

Բասաեւը Իրանին կոչ է անում չաջակցել Հայաստանին

ԳՈՐՁՆԻ, 23 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅԵՄԱՆ ՏՊՊՆ. Չեչենական ահաբեկիչների հրամանատար Շամիլ Բասաեւը 25 կետից բաղկացած ուղերձով դիմել է Իրանի իշխանություններին, ուր մասնավորապես մեղադրել է վերջիններիս՝ ընդդեմ Ադրբեջանի Հայաստանին աջակցելու համար: Ինչպես հայտնել է չեչենական «Կավկազ-ցենտր» գործակալությունը, ուղերձում մասնավորապես ասված է. «Ինչո՞ւ եք օգնում հայերին, երբ Ադրբեջանը թե՛ էթնիկական, եւ թե հոգեւոր տեսանկյունից Ձեր մերձավոր բարեկամն է»: Նույն այդ գործակալությունը, որը բազմիցս մեղադրվել է ապատեղեկատվություն տարածելու մեջ, հաղորդել է, որ Ջավախքի հայությունն իբր մսադիր է ինքնավարության հարց բարձրացնել: Հունիսի 22-ին տարածած հաղորդագրության մեջ նա մասնավորապես գրում է. «Չեչենական սկզբնաղբյուրները Թբիլիսիից եւ Երեւանից տեղեկացնում են, որ Վրաստանի տարածքից ռուսական ստորաբաժանումների դուրսբերման պարագայում Ջավախքի հայությունը կբարձրացնի ինքնորոշման հարցը՝ պատճառաբանելով դա պատերազմական Թբիլիսիի կողմից իրենց անվտանգության համար բավարար երաշխիքներ չներկայացնելով: Վրաստանի խորհրդարանի նախագահ Ժվանիայի հայկական ծագում ունենալու պարագայում Ախալքալաքում ինքնավարության ստեղծումը կամրապնդի հայամետ գործիչների դիրքերը Վրաստանում»:

Ռուսաստանը փողալվացքի գլխավոր երկրներից է

ՄՈՍԿՎԱ, 23 ՀՈՒՆԻՍ, ՍՆՍՐՔ. Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հաստիկ հանձնաժողովը հրապարակել է այն երկրների ցուցակը, որոնց օրենսդրությունն ու քաղաքականությունը նպաստում է փողերի լվացմանը: Դրանում ներառված են Ռուսաստանը, Իսրայելը, Լիբանանը, Ֆիլիպինները, Լիխտենշտեյնը եւ էլի 10 երկրներ: Հիմնականում Կարիբյան ծովի կղզիների եւ Օվկիանիայի: Հանձնաժողովը ՏՀԶԿ անդամ երկրներին առաջարկում է դադարեցնել ցանկացած ֆինանսական հարաբերություններ այդ պետությունների հետ: ԱՄՆ եւ Ֆրանսիայի ներկայացուցիչներն արդեն հավանություն են տվել այդ նախաձեռնությանը, սակայն նշել են, որ ցուցակը պետք է քաղաքական համարվի: Միեւնույն ժամանակ ՏՀԶԿ վերլուծաբանները կարծում են, որ Ռուսաստանն իրական հնարավորություններ ունի հաղթահարելու ֆինանսական չարաշահումները, եթե իշխանությունների եւ հասարակական ինստիտուտների կողմից դրսեւորվի դրա համար բավարար քաղաքական կամք:

ԿՈՎԿԱՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Կովկասի տարածաշրջանային էկոլոգիական կենտրոնը (Կովկասի ՏԷԿ) հայտարարում է թափուր տեղերի մասին հետեւյալ պատասխանատու.

համակարգող ֆինանսական/վարչական հարցերով ծրագրերի համակարգող տեղեկատվության եւ հաղորդակցության գծով համակարգող դրամաշնորհային ծրագրերի համակարգող քարտուղար

Աշխատավարձերը համադրելի են տարածաշրջանում աշխատող միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների համապատասխան չափանիշներին: Աշխատավարձի չափը կհամապատասխանի աշխատակցի փորձին (750-950 եվրո): Հետաքրքրվող անձինք մինչեւ 2000 թ-ի հուլիսի 10-ը պետք է ներկայացնեն իրենց հայտարարությունները եւ սեղմ կենսագրականը: Զրույցը կանցկացվի միայն նախապես ընտրված թեկնածուների հետ: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել գործադիր տնօրեն Նատո Կիրվալիձեին:

Հեռախոս՝ (995 32) 966956, ֆաքս՝ (995 32) 967971,

E-mail: rec@caucasus.net

ԿՈՎԿԱՍԻ ՏԷԿ-Ի ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ ՄՐՑՈՒՅԹ

Կովկասի տարածաշրջանային էկոլոգիական կենտրոնը հայտարարում է կազմակերպության խորհրդանիշի ստեղծման մրցույթ: Մրցույթին մասնակցել ցանկացող անձինք եւ կազմակերպությունները պետք է կապվեն Կովկասի ՏԷԿ-ի հետ, որպեսզի ստանան կազմակերպության բնույթին վերաբերող լրացուցիչ տեղեկություն: Նախագծողներից խորհրդանիշների էսքիզների ընդունման վերջին ժամկետը 2000 թ.-ի հուլիսի 15-ն է: Խորհրդանիշի ներկայացված նախագծերը կգնահատվեն մեկ ամսվա ընթացքում: Մրցույթի հաղթողը 300 եվրոյի չափով մրցանակ կստանա: Ցանկացած լրացուցիչ տեղեկության համար դիմել գործադիր տնօրեն Նատո Կիրվալիձեին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Պերինատալոգիայի, մանկաբարձության եւ գինեկոլոգիայի կենտրոնում (նախկին հանրապետական ծննդատուն) գործում է «Հայ-ամերիկյան մամոգրաֆիայի» համալսարանական կենտրոնի մասնաճյուղը: Այստեղ կատարվում է ոչ միայն կրծքագեղձի ուսումնասիրություն, այլեւ կանանց սեռական օրգանների բոլոր կարգի հետազոտություններ:

Բայց ամեն օր, ժամը 10:00-15:00-ը:

Կարիքավորները դիմեն հետեւյալ հասցեով
Աջափնյակ, Մարգարյան փ. 6/2:

Հեռ. 34 18 83

ԼՈՒԾԱՐՎՈՒՄ Է

«Քնարիկ» արտադրական կոոպերատիվը՝ գրանցված Երեւանի Սպանդարյան պետռեգիստրում 30.06.96 թ.: Գրանցման թիվ 286.080.02067, վկայական թիվ 01Ա/024589: Պարտատերերը երկամսյա ժամկետում դիմեն ք. Երեւան, Պիոներական 50:

ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ

24 հունիս

9.00 Հայլուր
9.20 Հիթ շերթ
9.50 Սեզամ, բացվիր
10.20 Մամուլի կողմակ
10.30 Մարզաշխարհ
11.00 Սեր փորձիկը մեծանում է
11.40 Գ/Ֆ «Սայաթ-Նովա»
13.20 Ջազի վարպետները
17.00 Հայլուր
17.20 Ոսկեփորիկ
17.50 Ակունքներ
18.10 Բարի ախորժակ
18.30 Ուրբեն Բաբայանը յոթ պատասխաններում
19.00 Խորան լուսո
19.10 «Համով լոտո»
(Նույն ժամին արբանյակային հեռարձակմամբ
19.10 Ռուբիկոն+)
20.00 Կարծիք
20.25 Կամուրջ
21.00 Հայլուր
21.40 Պրեմիերա
21.50 Ջինուժ
22.30 Փաստագրական շարք «Վերջին օրը», «Ջիմի Հենդրիքս»
22.45 Հայոց տաճարներ
23.00 Բոհեմ
23.40 Հայլուր
00.00 Գ/Ֆ «Վկան»

Պրոմեթեվս

10.00 «Բարի լույս, Հայաստան»
11.30 Մանկական սերիալ «Երկու կապիտան»
18.00 Մուլտֆիլմ
18.10 Մանկական ժամ. սերիալ «Նինձյա կրիաները», սերիալ «Մահացու ճակատամարտ»
19.10 Հեռուստաֆուտբոլ
19.35 Համերգ
20.00 Լրաբեր
20.35 «Թիվ 1»
21.05 Համերգ
21.40 «Պահնոցի»
22.00 Գ/Ֆ «Տարաս Բուլբա»

11.05 Շեյփինգ Սինդի Քրոուֆորդի հետ
11.30, 15.15 Մուլտֆիլմ
12.00 Տոմար
13.30 Գ/Ֆ «Անտառային գինվորը»
15.00 Հրապարակ
16.00 Աներեւակայելին իրականության մեջ
16.30 Գ/Ֆ «Թզուկը եւ հրահերը»
18.00 Ծաղրածուի մահը
18.30 Հմայիլ
19.05 Չոքիկ
19.30, 21.30, 24.00 Սուրհանդակ
20.00 Մամուլի խոսնակ
20.10 Գիսաստղեր
20.30 Հետագիծ
22.10 Համերգ. Գարուն-2000
23.15 Կ/Ֆ «Հրեջը»
0.35 Ակնքարք
0.40 Գ/Ֆ «Մայրուղի»
(ավարտին Սուրհանդակ)

9.00 Նորություններ
9.10 Հոգեւոր հովվի խոսքը. մետրոպոլիտ Կիրիլ
9.25 Սերիալ «Կուսության թիմի բոլոր ճանապարհորդությունները»
10.15 «Երալաշ»
10.25 Նվագիր, հարմոն սիրելի
11.00, 16.00 Նորություններ
16.10 Սերիալ «Լեոնցին»
17.00 Յոթերորդ զգայարան
17.45 «Ֆուտբոլի ժամանակը». Եվրո-2000
18.15 Դետեկտիվ-շոու
19.00 Նորություններ
19.15 Արտակարգ կանչ
19.45 Կանացի պատմություններ
20.20 Գ/Ֆ «Դարձեք իմ ամուսինը» (դերերում Ե. Պրոկլովա, Ա. Միրոնով, Ն. Ռուսլանովա, Բ. Բասով, 1981 թ.)
22.00 Ս. Դոբենկոյի հեղինակային ծրագիրը
23.00 Ֆուտբոլ. Եվրոպայի առաջնություն. 1/4 եզրափակիչ
01.10 Ֆիլմ-օպերա «Հիսուս Քրիստոս գերաստղ» (դերերում Թ. Նիլի, Կ. Անդերսոն, Ի. Էլիմեն, Բ. Դենեն, ԱՄՆ, 1971 թ.)

9.00 Կինոնկար երեխաների համար «Ծիածան» (ԱՄՆ)
10.30 ՊՏՊ-ի փոստը
11.00 Բարի լույս, երկիր
11.45 «Հայրուղը մեկին»
12.45 Ինքդ ինձ օգժիստ
13.05 Սերիալ «Ընկերները-2»
13.35 Ոսկե բանալի
14.00, 21.00 Լուրեր
14.20 Դաշնություն
15.10 Ցերեկային սեանս. Գ/Ֆ «Նենգ հրաղուրողը» (Հնդկաստան)
17.10 Երկիր մոլորակ
18.05 «Երեկոներ ռոլիտեխնիկում». Ալեքսանդր Դոլսկի
19.05 Իմ ընտանիքը
20.05 Երկու ռոյալ
21.45 «Անբլազը» եւ ընկ.
22.50 Շրջանավարտների պարահանդես-2000
23.30 Ֆուտբոլի Եվրոպայի առաջնություն. 1/4 եզրափակիչ
01.45 Ֆուտբոլի Եվրոպայի առաջնություն. օրվա ամփոփում
02.00 Շրջանավարտների պարահանդես-2000 (շարունակություն)

25 հունիս

10.05 Առավոտ լուսո
10.15 Բարեւ
11.45 Շախմատ-64
12.00 Ջինուժ
12.35 Մուլտսերիալ «Թզվառները» (11, 12-րդ սերիաներ)
13.30 Մարդը եւ բնությունը
14.00 Փաստագրական շարք «Մնաս բարով, XX դար. 1935 թ.»
15.00 «Լեզո» հեռուստամրցույթ
15.20 Գ/Ֆ «Ով է դավել Ռոջեր Նաթասակին»
17.00 Հայորդաց տներ
17.10 Շաբ. Ազնվուրը Օլիմպիայում
18.10 Բարի ախորժակ
18.30 «Կապիտալ»
19.30 Կարոտ
18.55 Հայի 12 դեմքը. Գուրգեն Ջանիբեկյան
20.00 Խորհրդարանական ժամ
20.30 Անմեղության կանխավարկած
21.00 Կիրակնօրյա «Հայլուր»
21.40 Սանրամասներ
21.55 8 1/2. Գ/Ֆ «Ուրվական տունը. սամուրայի ուղին»

Պրոմեթեվս

10.00 Մանկական սերիալ «Երկու կապիտան»
11.05 «Պահնոցի»
11.20 NON-STOP
11.30 Արկածային էկրան. «Ինդիանա Ջոնս. ճակատագրի տաճարը»
18.00 Լիամետրաժ մուլտֆիլմ «Երրորդ մոլորակի գաղտնիքները»
18.50 Վավ. ֆիլմ
19.30 Համերգ
20.00 «Միասին+» (ՄԻՐ)
20.30 «Ներքնյանք». Արամ Իսաբեկյան
21.00 Դասական ընտրանի
21.30 Գործարար Հայաստան
22.00 Ջազ
22.30 «Ոգնի» լոտո
23.30 Գ/Ֆ «Հրեշակների խաղը»

11.05 Շեյփինգ Սինդի Քրոուֆորդի հետ
11.30, 17.00 Մուլտֆիլմ
12.00 Տոմար
13.30 Գ/Ֆ «Երկուսը՝ ես եւ իմ սպերը»
15.00 Հրապարակ
15.15 Ի դեմ
15.40 Հետագիծ (կրկնություն)
16.30 Մեյ-դեյ
16.50 Գանձերի կղզին (4-րդ մաս)
18.00 Գ/Ֆ «Վքար»
19.45 Օլյայի օրագիրը
20.00 Անուշադրության կենտրոն
23.00 Յոթ խաչ
23.50 Գ/Ֆ «Էվիտա»

9.00 Նորություններ
9.10 Բանակային խանութ
9.40 Դիսնեյ-ակումբ «Ալադին»
10.10 Վաղորդյան ասող
11.00 Նորություններ
11.10 Կոլիզվի «Անլուրջ նոթերը»
11.30 Քանի դեռ բոլորը տանն են
12.05 Սերիալ «Ալֆ»
12.35 Առողջություն
13.05 Գ/Ֆ «Այրվածք»
15.15 Ճանապարհորդների ակումբ
15.45 Մի գլուխգործոցի պատմություն
16.00 Նորություններ
16.10 Սերիալ «Լեոնցին»
17.05 Ամեն ինչ հնարավոր է
17.25 Դիսնեյ-ակումբ «101 դալմաթին»
17.50 Դիսնեյ-ակումբ «Վինի Թուխի նոր արկածները»
18.20 «Արծաթե գունդ»
19.00 Նորություններ
19.15 «Երալաշ»
19.25 Ծիծաղի համայնապատկեր
20.05 Գ/Ֆ «Մեծ իրարանցում փոքր Չինաստանում» (դերերում Կ. Ռասել, Ք. Քեքրալ, Դ. Դան, ԱՄՆ, 1986 թ.)
22.00 Ժամանակ
23.00 Ֆուտբոլ. Եվրոպայի առաջնություն. 1/4 եզրափակիչ
01.05 Գ/Ֆ «Գործակալ Մակինտոշը» (դերերում Փ. Նյուման, Դ. Սանդա, Ջ. Մեյսոն, Գ. Ենդրյուս, Մեծ Բրիտանիա, 1973 թ.)

9.00 Մուլտֆիլմ
9.20 «Հայրիկը, մայրիկը, ես սպորտային ընտանիք եմք»
10.20 Մանկան շուրթերով
10.55 Բարի լույս, երկիր
11.30 «Անբլազ» եւ ընկ
12.30 «Քաղաքիկ»
13.00 Ռուսական լոտո
13.40 Մուլտծրագիր
14.00 Լուրեր
14.20 Խորհրդարանական ժամ
15.15 Նոր «Հին բնակարան»
16.15 Երկխոսություններ կենդանիների մասին
17.15 Վավերագրական ֆիլմ «Կալմիկյան խրոնոտոդ»
18.00 Մամուլի ակումբ
19.00 Միջազգային համայնապատկեր
19.45 Կինոյի ժամ. Գ/Ֆ «Զոյա» (ԱՄՆ, 1-ին սերիա)
21.00 Հայելի
21.55 Գ/Ֆ «Զոյա» (2-րդ սերիա)
23.30 Ֆուտբոլի Եվրոպայի առաջնություն. 1/4 եզրափակիչ
01.45 Ֆուտբոլի Եվրոպայի առաջնություն. օրվա ամփոփումը
02.00 Վերջին սեանս. Ջեֆ Ֆեյին եւ Փիրս Բրոսնանը «Սիգամարգ հնձողը» ֆիլմում (ԱՄՆ)

26 հունիս

9.00 Հեռուստասերիալ «Լատինական փաստաբանը»
10.00 Կիրակնօրյա «Հայլուր» (սուրդոթարգմանությամբ)
10.35 Օհան Դուրյան. «Կոմիտասական»
11.00 Գ/Ֆ «Ուրվական տունը. Սամուրայի ուղին»
13.00 Հայլուր
17.00 Ռուբիկոն+
17.00 Հայլուր
17.20 Մուլտսերիալ «Թզվառները» (12-րդ սերիա)
17.45 Իմ տունը
18.00 Հեռուստասերիալ «Լատինական փաստաբանը»
19.00 1 լուր
19.10 «Հայի բախտ»
(Նույն ժամին արբանյակային հեռարձակմամբ
19.10 Կեսգիշերային ճեմընթաց)
20.00 Չեռագիր
20.35 Տուն-տունիկ
21.00 Հայլուր
21.40 Հեռուստակատալոգ
21.50 «Համայնապատկեր»
22.15 Կուլիսների ետեւում
22.35 Փաստագրական շարք «Մնաս բարով, XX դար. 1936 թ. թիվ»
23.40 Հայլուր
00.00 Կեսգիշերային ճեմընթաց
01.00 Ռուբիկոն+

Պրոմեթեվս

9.00 «Բարի լույս, Հայաստան»
10.30 «Ամեն ինչ հանուն քո սիրո»
18.00 Մուլտֆիլմ
18.10 Մանկական ժամ. սերիալ «Նինձյա կրիաները», սերիալ «Մահացու ճակատամարտ»
19.00 «Ամեն ինչ հանուն քո սիրո»
20.00 Լրաբեր
20.35 Ռ. Մավիսակալյանի «Հարցեր» հեղինակային ծրագիրը
21.20 Օրը
22.25 «1-02» լրատու
22.30 Գ/Ֆ «Քաղաքացի Իքսը»
(24.00 Լրաբեր)

19.05 Չոքիկ
19.30, 21.30 24.00 Սուրհանդակ
20.00 Ավետա
20.30 Անթեղ
21.10 Դիվաղաղար
22.05 Գ/Ֆ «Մրրկային շարժում»
00.35 Ակնքարք
00.40 Գ/Ֆ «Սթնշաղի ծառաները»
(ավարտին Սուրհանդակ)

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.20 Հրաշքների դաշտ
16.00 Նորություններ
16.20 Մուլտսերիալ «Ջոնի Քվեսթի անհավանական արկածները»
16.45 Աստղային ժամ
17.10 _ Մինչեւ 16 եւ բարձր
17.40 Համով պատմություններ
17.55 Սերիալ «Բաբելոնյան աշտարակ»
19.00 Նորություններ
19.30 KBH-մոլորակ
20.00 Գ/Ֆ «Թեւերի թափահարումը» (դերերում Ե. Կարելսկիխ, Վ. Ջամանսկի, 1986 թ.)
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
23.00 Սերիալ «Գաղտնի նյութեր»
23.55 Հայաց
00.35 Դետեկտիվ «Մայր Համեր»
01.30 Նորություններ
01.50 «Պարանորմալ երեւույթներ: Փակ դռսյե»

7.00, 8.00, 9.00, 10.00 Լուրեր
7.20, 7.50, 8.40, 9.45 Բարի լույս, Ռուսաստան
7.35, 9.35 Ընտանեկան նորություններ
8.20, 10.20 Սեւով սպիտակի վրա
8.30 ՊՏՊ-ի փոստը
9.20 Հեռուստատեսային ՀՄՄ. հերթապահ բաժանմունք
10.35 Մուլտսերիալ «Դե, սպասիր»
10.45 Մուլտսերիալ «Սեւ ծովահենը»
11.15 Սերիալ «Գնչուհին»
12.05 Սերիալ «Սանտա Բարբարա»
13.00 Հայելի
14.00, 18.00, 21.00 00.00 Լուրեր
14.30 «Մարիինա ռոշչա»
15.05 Սերիալ «Սեւ մարգարիտ»
15.55 Սերիալ «Հարուստներն ու նշանավորները»
16.45 Երկու դաշնամուր
17.35 Իմ XX դարը
18.35 Վավերագրական սերիալ «Հազարամյակի գաղտնիքները» Արմեն Ջիգարխանյանի հետ
19.25 Սերիալ «Փախստական միանձնուհիները»
20.25 Կլոր տարեթիվ. Կլարա Լուչկո
21.50 Սերիալ «Վայրի հրեշակը»
23.35 Հերթապահ բաժանմունք
00.35 Ֆուտբոլ+TV

@rmineco Global Telecommunications

Ինտերնետ ծառայություններ «ԻՆՏԵՐՆԵՏ» սրճարանում: Խանջյան 50: Հեռ. 575823:

«Տիգրան Մեծ» հրատարակչություն՝ տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատվեր 1281. Տպաքանակը՝ 4000. Ստորագրված է տպագրության՝ 23.06.2000. Գինը՝ 100 դրամ